

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 20.12.2023թ. չորեքշաբթի թիվ 52 (1129)

## Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ

### Մաղթանք

Ավարտվում է տարին... Շուտով կնստենք Ամանորի սեղանների շուրջ, մեր եւ մեր բարեկամների ջերմ օջախներում կվայելենք կրկին Աստծո հացն ու գինին եւ մյուս պես-պես բարիքներն ու բառեր չենք խնայի՝ մաղթանքներով միմյանց ողողելու համար... Թող որ Աստված իրագործի մեր բոլոր բարի ցանկությունները: Արդ, բոլոր մաղթանքներին ընդառաջ, թող այս մեկն էլ ուղղվի մեր կողմից. գուցե մի քիչ անսովոր, գուցե նաեւ մի քիչ տխրալի, բայց, ի վերջո, զվարթ ու նպատակամետ:

Հին հույները, ասում են, հեռացել են պատմության թատերաբեմից. ինչպես նաեւ հին եգիպտացիները... Այսօրվա հույները հին հույները չեն, ոչ էլ, մանավանդ, եգիպտոսի այսօրվա քաղաքացիներն են հին եգիպտացիները... Արդեն կռահեցիր, սիրելի՛ Ընթերցող, ենթադրվող հարցադրումը. մի՞թե մենք էլ հին հայերը չենք... Մի՞թե փոխվել է նաեւ մեր տեսակը... Դատելով առերևույթ՝ թերեւս այո: Բայց երբ նայում ենք դեպի մեր խորքը, մեր ներաշխարհի անկյուններում ծվարած ենք գտնում **Հին հային**՝ իրեն բնորոշ հոգեկերտվածքով, բնավորության միայն իրեն հատուկ ելեւէջներով...

Երկրում իրավիճակ է փոխվել... Եղել է նաեւ պատերազմ... Իրավիճակներն ու պատերազմները կարող են եւ պետք է հերթագայեն միմյանց... Սայայն մեզ մնում է չխճճվել իրադարձությունների բավիղներում եւ չխաթարել մեր տեսակը...

Ես վստահ եմ, համոզված եմ, որ Դու, սիրելի՛ Ընթերցող, ինչ կրթության ու մասնագիտության, ինչ արհեստի կամ արվեստի, ինչ կարողության կամ դիրքի տեր էլ լինես, սիրո՞ւմ ես Քո ներսում բնակվող **Հին հային**: Եւ միայն բարենպաստ միջավայրի ու համընդհանուր տրամադրվածության պահն է պակասել, որ Նա Քո միջից հառնի իր ողջ վեհությամբ...

Գալու՞ է, չէ՞, մեր ժամանակը... Բայց մինչ այդ հարկ է որ մենք պահպանենք մեզ, մեր տեսակը...

Պահպանենք մեզ, մեր տեսակը. թող այս լինի մեր մաղթանքների մաղթանքը: Եւ բոլոր նրանք, ովքեր ունեն **մեր տեսակի պահպանմանն աջակցելու** կոչումն ու առաքելությունը, թող որ աննկուն ու աննահանջ հաջողեն իրենց վեհ գործի մեջ նոր՝ 2024 եւ էլի գալիք տարիների ընթացքում... Մինչեւ **լրումը ժամանակի**:

Բարով է գալիս **Վիշապի** տարին: **Հունձքն ավելի առատ է լինելու. մենք վիշապաքաղ ենք:**

Գ.Մ.



### Կառավարության նիստում

#### Պատահական չէ, որ մեր մարզիկներն այս տարի արդեն նվաճել են 432 մեդալ...

Կառավարության վերջին նիստում հավանության է արժանացել ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2024-2030 թվականների ռազմավարությունը եւ գործողությունների պլանը: Հարցը զեկուցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը**: Նրա խոսքով՝ սպորտի զարգացումը եւ հանրության շրջանում առողջ ֆիզիկական ակտիվության խրախուսումը ՀՀ կառավարության ծրագրի կարեւոր առաջնահերթություններից է: «**Հենց այդ շարունակական քաղաքականության հետեւանք է, որ այսօր արդեն Աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում մեր մարզիկները գրանցել են 432 մեդալ, որը շուրջ 40 տոկոսով ավելի է, քան նախորդ տարվա ռեկորդային 307 մեդալը**», - նշել է նախարարը:

շարունակությունը՝ էջ 2

### Դպրոցական արձակուրդների մասին

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված՝ հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններով սահմանվել են դպրոցականների արձակուրդների հետեւյալ օրերը.

2023-2024 ուսումնական տարում **3-12-րդ դասարանների** սովորողներին տրվում են արձակուրդներ.

- **ձմեռային՝** 2023 թ. դեկտեմբերի 25-ից 2024 թ. հունվարի 7-ը ներառյալ,

- **գարնանային՝** 2024 թ. մարտի 25-ից մարտի 31-ը ներառյալ:

Առաջին դասարանցիների արձակուրդները տեւում են.

- **ձմեռայինը՝** 2023 թ. դեկտեմբերի 25-ից 2024 թ. հունվարի 21-ը ներառյալ,

- **գարնանայինը՝** 2024 թ. մարտի 18-ից մարտի 31-ը ներառյալ:

Երկրորդ դասարանցիների արձակուրդները տեւում են.

- **ձմեռայինը՝** 2023 թ. դեկտեմբերի 25-ից 2024 թ. հունվարի 21-ը ներառյալ,

- **գարնանայինը՝** 2024 թ. մարտի 25-ից մարտի 31-ը ներառյալ:

ԿԳՄՍ նախարարությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների եւ սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցերում: Այդ փոփոխությունները կարող է կատարել նաեւ ուսհաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչեւ ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու մասին լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

## Թող Վիշապի տարին լինի բարեբեր



Նախագիծ

Փոփոխություններ՝ վերապատրաստման կարգում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգում:

Ներկայում ուսուցիչների հերթական ատեստավորման վերապատրաստումն իրականացվում է նախարարության երաշխավորած կազմակերպությունների կողմից, եւ բոլոր ուսուցիչները՝ անկախ իրենց հմտություններից եւ կարողունակություններից, ինչպես նաեւ ստաժից, մասնակցում են նույն դասընթացներին՝ հավաքելով սահմանված չափով կրեդիտներ, որի արդյունքում համարվում են ատեստավորված:

Առաջարկվող փոփոխություններով ակնկալվում է վերանայել վերապատրաստումների իրականացման մեխանիզմները եւ դրանք իրականացնել առավելագույնը չորս մակարդակում արված գնահատումների արդյունքում արձանագրված մասնագիտական կարիքից ելնելով, այդ թվում առարկայի իմացության:

Ըստ այդմ ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքը կգնահատվի ուսուցչի եւ տնօրենի կողմից Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում հարցաթերթիկի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով: Ուսուցիչը կիրականացնի ինքնագնահատում, իսկ տնօրենը դասախոսների միջոցով կորոշի ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքի աստիճանը: Էլեկտրոնային հարթակում կծեւավորվի ուսուցչի մասնագիտական կարիքի վերաբերյալ տեղեկանք, որով էլ ուսուցիչը կմասնակցի համապատասխան մոդուլով վերապատրաստմանը:

Ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքը ձեւավորվում է՝ ըստ մոդուլների՝ յուրաքանչյուր մոդուլի համար նշելով համապատասխան մակարդակը: Ուսուցիչը յուրաքանչյուր մոդուլից մասնակցում է բարդության համապատասխան մակարդակի վերապատրաստումների, որոնց արդյունքում առնվազն 9 կրեդիտ հավաքելուց հետո ատեստավորվում է:

Ուսուցիչն ատեստավորման համար պահանջվող կրեդիտները, իր մասնագիտական զարգացման կարիքին համապատասխան, կարող է հավաքել ատեստավորման համապատասխան շրջափուլի ընթացքում:

Ուսուցչի մասնագիտական զարգացման շրջափուլը սահմանված է կարգի նախագծով:

Նախագծով առաջարկվում է առարկայի իմացության կարիքի բացահայտման դեպքում վերապատրաստման իրականացման գործառնությունը վերապահել տվյալ առարկայի մասնագիտական որակավորում շնորհող բուհին, մասնագիտական մյուս կարիքների բացահայտման դեպքում՝ համապատասխան մոդուլի համար երաշխավորված կազմակերպությանը:

Կախված ուսուցչի աշխատանքային փորձից՝ տարբերակված է նաեւ վերապատրաստման եղանակը: Սկսնակ ուսուցիչների համար այն կլինի առկա ձեռագրով, իսկ ավելի մեծ աշխատանքային փորձ ունեցող ուսուցիչների համար կարող է իրականացվել հեռավար կամ հիբրիդ ձեւաչափով:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ դեկտեմբերի 23-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատահական չէ, որ մեր մարզիկներն այս տարի արդեն նվաճել են 432 մեդալ...

սկիզբը՝ էջ 1

Նախարարը տեղեկացրել է, որ միայն այս պահին ընթացքի մեջ է ավելի քան 10 մարզական օբյեկտների շինարարություն, հիմնանորոգում, նախագծում:

Ժամանա Անդրեասյանի խոսքով՝ յուրաքանչյուր խոշորացված համայնքում նախատեսվում է ունենալ տիպային մարզական կառույց՝ լողավազանի, խաղային մարզաձեւերի եւ այլ հնարավորություններով: Ժամանա Անդրեասյանը հայտնել է նաեւ, որ եկող տարվա համար արդեն նախատեսված է մանկաույցների նախագծումը եղգնածորում եւ Բերդում:

«Մեծ աշխատանք է տարվելու հանրության շրջանում ֆիզիկական ակտիվության հանդեպ դրական դիրքորոշում ձեւավորելու, սպորտով զբաղվելը խրախուսելու համար: Նախատեսում ենք, որ պետք է առնվազն կրկնապատկվի մասնակցության ցուցանիշը մասսայական մարզական միջոցառումներին», - ասել է Ժամանա Անդրեասյանը՝ հավելելով, որ եկող տարի կծեւափոխվեն «Վարչապետի գավաթի» մրցաշարերը. սեղանի թենիսի եւ հեծանվավազքի մրցաշարերը կդառնան դպրոցական, կավելանա մեր մրցաշար բազմօրյա խճուղային հեծանվավազք:

Առանձին աշխատանք է տարվելու ժամանակակից գիտամեթոդական վերականգնողական կենտրոնի ձեւավորման, սպորտային բժշկության եւ սպորտային գիտության զարգացման ուղղությամբ:

Նախարարի դիտարկմամբ՝ ոլորտում առանձին խնդիր է հաշվետվողականությունը: Վերանայվելու եւ հստակեցվելու են, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների միջոցով, լիազոր մարմնի, ֆեդերացիաների, Օլիմպիական կոմիտեի եւ մարզական կազմակերպությունների հարաբերությունները: Ներդրվելու է տեղեկատվական կառավարման համակարգ, աշխատանք է տարվելու մասնավոր ոլորտի ներգրավվածության մեծացման մասով, այդ թվում՝ կառավարման գործընթացները պատվիրակելու միջոցով: Կանխվել են առանձին մարզածեւերի զարգացման ծրագրեր, ինչպես՝ ֆուտբոլը, շախմատը, բասկետբոլը, ձմեռային մարզաձեւերը:

«Ուզանավարության կարեւոր ուղղություններից է ոլորտում կարողությունների զարգացումը՝ մարզիչների եւ մրցավարների որակավորման աստիճանական ստանդարտների, արդի պահանջներին համապատասխան վերապատրաստումների համակարգի ներդրման եւ այլ ուղղություններով: Շարունակելու են գործել նվաճումներ ունեցող մարզիկների, նրանց մարզիչների խրախուսման գործիքները, որը թե՛ միանվազ, թե՛ ամսական կտրվածքով դրամական շոշափելի աջակցություն է: Ունենք նույնիսկ ամսական մեկ միլիոն դրամից ավելի դրամական խրախուսում ստացող մարզիկներ», - ասել է նախարար Ժամանա Անդրեասյանը:

Նախարարը կարեւորել է մարզիչների աշխատավարձերի բարձրացման քաղաքականությունը կամավոր ատեստավորման ներդրման միջոցով, որն այս տարի իրականացվել է 4 մարզածեւի համար, սակայն եկող տարի կընդլայնվի՝ ընդգրկելով մեծ թվով մարզածեւեր:

Ոլորտում առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու միջազգայնացմանը, որը դրսեւորվելու է թե՛ դոպինգի կիրառման դեմ պայքարի իրավական մեխանիզմների կատարելագործման, թե՛ անվտանգության ժամանակակից համակարգերի ստեղծման միջոցով:

Ուզանավարության առանձին է կարեւոր ուղղություն է Հայաստանի Հանրապետությունում միջազգային խոշոր մրցաշարերի հյուրընկալելը: ԿԳՄՍ նախարարի ընդգծմամբ՝ վերջին տարիներին այն իրա-



կանացվում է բավականին մեծ հաջողությամբ եւ արդեն իսկ հանգեցրել է միջազգային սպորտային քարտեզի վրա Հայաստանի դիրքի ամրապնդմանը: «Այս տարի արդեն մի քանի մրցաշար անցկացվել է, հաստատվել են մրցաշարեր անցկացնելու մասին մեր հայտեր, մի քանի հայտեր էլ, ինչպես Ֆրանկոֆոնիայի միջազգային մարզամշակութային խաղերի անցկացման հայտը, քննարկման փուլում են», - հավելել է Ժամանա Անդրեասյանը:

Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ ռազմավարությունը մանրամասն քննարկվել է շահառու խմբերի հետ եւ արտացոլում է ոլորտում առկա խնդիրների լուծումն ու Կառավարության հետեւողական ջանքերն այդ ուղղությամբ. ռազմավարությունն այդ քայլերը կարճաժամկետով ինստիտուցիոնալ ու տեսանելի:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւս կարեւորել է ռազմավարության ընդունումը՝ ընդգծելով, որ Հայաստանում աշխարհի եւ եվրոպայի առաջնությունների անցկացումը լրացուցիչ լիցք է խթանի է հանդիսանում մարզիկների համար, եւ այդ պրակտիկան պետք է շարունակել: Վարչապետը ԿԳՄՍ նախարարին խնդրել է ներկայացնել վիճակագրություն, թե 2018 թվականից ինչպիսի դինամիկա կա աշխարհի եւ եվրոպայի առաջնություններում վաստակած մեդալների եւ դրանց շրջանակում ունեցող մեդալների չափաբաժնի, ինչպես նաեւ սպորտում կանանց ներգրավվածության եւ սպորտի ոլորտի ֆինանսավորման վերաբերյալ:

Ի պատասխան ԿԳՄՍ նախարարը տեղեկացրել է, որ ֆինանսավորման մասով էական փոփոխություններ են իրականացվել. 2018 թվականին ոլորտին հատկացվել է շուրջ 2,1 մլրդ դրամ, ընդ որում՝ այն վերաբերել է թե՛ մեծ նվաճումների եւ թե՛ մասսայական սպորտի բնագավառներին. «Ուշադրություն է արժանի այն համագնացները, որ դրանում ներառված չի եղել որեւէ կապիտալ ծախս: 2019 թվականին արդեն ավելի քան 60 տոկոսով ավելացրել ենք սպորտի ֆինանսավորումը՝ հատկացնելով ավելի քան 10,2 մլրդ դրամ եւ այսպիսով ավելի քան քառապատկելով 2018-ին հատկացված բյուջեն: Ընդ որում՝ էական ծախսեր են հատկացվել նաեւ կապիտալ ներդրումների համար: 2023 թվականին ոլորտին հատկացվել է 10.288 մլրդ դրամ, 2024-ի հայտում ֆինանսավորումը մի փոքր նվազում է՝ 6.656 մլրդ դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս տարի մեր երկրում անցկացրել ենք մի շարք խոշոր միջազգային մրցաշարեր, որոնց կազմակերպման համար զգալի միջոցներ են ներդրվել: Հաջորդ տարին օլիմպիական է, եւ սպորտային աշխարհի ուշադրությունն ուղղված է լինելու Փարիզի

խաղերին, եւ մեր հիմնական ջանքերը եւս ուղղվելու են դրան», - նշել է նախարարը: Նրա խոսքով՝ մասսայական սպորտին 2018-ին հատկացվել է ընդամենը 211,9 մլն դրամ, իսկ արդեն 2024-ին՝ 2,6 մլրդ դրամ, որն ուղղված է հանրության շրջանում ֆիզիկական ակտիվության եւ առողջ ապրելակերպի խրախուսումը:

Անդրադառնալով մեդալների հարցին՝ Ժամանա Անդրեասյանը տեղեկացրել է, որ 2018-ին ՀՀ մարզիկները նվաճել են 203 մեդալ, որոնցից 53-ը՝ աշխարհի, 150-ը՝ եվրոպայի առաջնություններին: 2019-ին արդեն արձանագրվել է աճ՝ 222 մեդալ: Քովիդով պայմանավորված՝ նախարարը չի անդրադարձել հաջորդ տարիներին ներկայացնելով 2023 թվականի ներկրդային ցուցանիշը՝ 307, որը 2019-ի համեմատ արձանագրել է ավելի քան 30 տոկոս աճ: Ըստ Ժամանա Անդրեասյանի՝ այս տարի արդեն ունենք ռեկորդային 432 մեդալ, եւ մինչեւ տարեվերջ դեռ մեր մեդալների ակնկալիքներ կան: Նրա խոսքով՝ ոսկու եւ մյուս մեդալների համամասնությունն այսպիսին է՝ ոսկե մեդալները 27-30 տոկոսի սահմաններում են, եւ այս ցուցանիշը փոքր փոփոխություններով պահպանվել է այս տարիների ընթացքում: Մեդալների 70-72 տոկոսն արձանագրվել է եվրոպայի, իսկ մնացածը՝ աշխարհի առաջնություններում:

Անդրադառնալով սպորտում կանանց ներգրավվածությանը՝ նախարարը տեղեկացրել է 2018-ին 203 մեդալից կանայք նվաճել են ընդամենը 6-ը (2,9 տոկոս): Տարիների ընթացքում այդ թիվն աճել է. այս տարի արդեն 432 մեդալից 25-ը կանանց կողմից է (5,7 տոկոս), այսինքն՝ այդ առումով եւս դրական դինամիկա կա:

Վարչապետը փաստել է՝ փաստորեն 2018-ի համեմատ եռապատկվել է սպորտին հատկացված ֆինանսավորումը՝ միջազգային միջոցառումները հանած, տասնապատկվել մասսայական սպորտի գունդները եւ ավելի քան կրկնապատկվել մեդալների թիվը: Վարչապետը ռազմավարության մեջ հատկապես կարեւորել է երկու ուղղություն կանանց սպորտի եւ մարզերում մարզական ենթակառուցվածքների զարգացումը: Վարչապետն ընդգծել է նաեւ խոշոր հատկացումների ֆոնին ֆեդերացիաների կողմից հաշվետվողականության, թափանցիկության եւ որակի ապահովման խնդիրը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Դուլարյանը տեղեկացրել է, որ մինչեւ տարեվերջ շահագործման կհանձնվեն Սիմոն Մարտիրոսյանի անվան մարզադպրոցը, ինչպես նաեւ դպրոցների վերակառուցված եւ նորակառույց 23 մարզադահլիճ:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Կառավարության որոշմամբ

Մշակույթ

# Վերականգնվել է ՀՀ թանգարանային ֆոնդի համալրման նպատակով բյուջետային միջոցների տրամադրումը

## Հաստատվել է կինոռեեստրը վարելու կարգը

ՀՀ կառավարության որոշմամբ՝ 44 մլն 320 հազար դրամ է ուղղվել 2023 թվականին Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի համալրմանը:

ՀՀ թանգարանային ֆոնդը կհամալրվի Մարտիրոս Սարյանի, Հրաչյա Ռուսկոյանի, Արամ Իսաբեկյանի, Սարգիս Մուրադյանի բարձրարժեք ստեղծագործություններով, Ավետիք Իսահակյանի նամակներով, ինքնատիպ և բացառիկ գորգերով:

Թանգարանային ֆոնդի համալրման նպատակով հատկացվածները կրելու են շարունակական բնույթ. յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեով այդ նպատակով կնախատեսվի համապատասխան գումար:

Թանգարանային ֆոնդի պարբերաբար համալրումը մշակութային արժեքների ձեռքբերման, թանգարանային հավաքածուների հանրահռչակման, մշակութային ժառանգության պահպանության և սե-

րուղղներին փոխանցման կարեւորագույն երաշխիքներից են:

2007-2008 թթ. պետական բյուջեից թանգարանների հավաքածուների համալրման նպատակով տրամադրվել է համապատասխանաբար 45 մլն 371 հազար և 47 մլն 773 հազար դրամ:

2009 թ. կասեցվել է թանգարանների համալրման համար նախատեսված գումարների տրամադրումը, որը բացասաբար է ազդարարծել թանգարանային ֆոնդերը հազվագյուտ նմուշներով հարստացնելու վրա: Թանգարանների հավաքածուները 2009 թվականից համալրվում են բացառապես նվիրատվությունների, պեղումների, իսկ առանձին դեպքերում՝ արտաբյուջետային միջոցների հաշվին:

Հատկապես այս բացն առավել տեսանելի է մշակութային արժեքների արտահանման ժամանակ, երբ երկրից դուրս են բերվում ժամագային նշանակության բա-

ցառիկ արժեքներ: Համաձայն «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի մշակութային այն արժեքները, որոնք գրանցված են կամ ենթակա են գրանցման մշակութային արժեքների պահպանական ցուցակում, արտահանվում են միայն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը մեկամսյա ժամկետում չի օգտվում դրանց գնման նախապատվության իրավունքից: Փաստորեն, համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով պետությունը չի կարողանում իրացնել օրենքով սահմանված իր իրավունքը:

Այսպիսով ՀՀ կառավարության որոշման կիրարկմամբ՝ վերականգնվում է ցուցանուշների համալրման նպատակով համապատասխան բյուջետային միջոցների տրամադրումը, որը հնարավորություն կտա թանգարանային ֆոնդերը համալրել բացառիկ գեղարվեստական արժեքներով:

### Հայագիտական

## Կատեղծվի ցանցային համալսարան

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է համագործակցության ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգը, որով սահմանվում են համալսարանի ձևավորման համար ձեռնարկվող քայլերի շրջանակը և զարգացման սկզբունքները:

Ցանցային հայագիտական համալսարանի ստեղծմամբ հնարավոր կլինի միավորել հայագիտական կենտրոններում արդեն իսկ զարգացող կարողությունները և սահմանել դրանց զարգացման ուղղված գործուն քայլերի շրջանակը:

Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման համար հիմք են հանդիսանում՝

- օտարերկրյա պետություններում հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը,

- հայկական սփյուռքի ջանքերը՝ ուղղված օտարերկրյա պետություններում հայ ինքնության պահպանմանը,

- Հայաստանի ջանքերը՝ ուղղված ամբողջ աշխարհում հայագիտության զարգացմանը և հայկական մշակույթի ու քաղաքակրթության տարածմանը:

Ցանցային հայագիտական համալսարանի գործունեությամբ հնարավոր կլինի իրականացնել հայագիտության միասնական և համակարգված քաղաքականություն, սահմանել գերակա ուղղություններ: Մասնավորապես՝ Հայաստանում և օտարերկրյա պետություններում գործող հայագիտական հաստատությունների համագործակցությամբ մշակել և իրականացնել կրթահետազոտական նպատակային ծրագրեր, էլեկտրոնային կայքի միջոցով ձեռնարկել միասնական տեղեկատվական հարթակ՝ հետազոտվող թեմաների և նյութերի մասին տեղեկությունն առավելագույն չափով հասանելի դարձնելու նպատակով, ընդլայնել հայագիտական լավագույն աշխատանքների հանրային հասանելիության շրջանակը՝ ապահովելով դրանց տարածումը տարբեր լեզուներով:

Ցանցային հայագիտական համալսարանի կառավարումը կիրականացվի մեկ կենտրոնից՝ համակարգող մարմնի միջոցով: Նման մարմին կարող է հանդիսանալ Հայաստանում գործող որևէ բարձրագույն

ուսումնական հաստատություն կամ գիտահետազոտական կենտրոն: Համալսարանի գործունեության համակարգումը կիրականացվի կառավարման խորհրդի միջոցով, որը կձևավորվի համալսարանի մասնակից հանդիսացող կրթագիտական հաստատությունների ներկայացուցիչներից:

Համալսարանի գործունեությունը կառուցված է լինելու կրթական ծրագրերի իրականացման ցանցային ձևի հիման վրա, ինչը հնարավորություն կտա ուսանողներին և հետազոտողներին ընդգրկվելու կրթահետազոտական համատեղ ծրագրերում՝ օգտագործելով համալսարանում ընդգրկված կառույցների հնարավորությունները:

Օտարերկրյա պետությունների բուհերը կամ գիտահետազոտական կազմակերպությունները, որոնք ցանկանում են միանալ Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման համընկերության (կոնսորցիումի) մասին հուշագրին և մասնակիցների կողմից իրականացվող համատեղ ծրագրերին, կգնահատվեն նախապես մշակված և հաստատված չափանիշներով: Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման առաջին փուլում կդիտարկվի ՀՀ բուհերի և գիտահետազոտական կազմակերպությունների և ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրում ներառված 13 պետությունների 15 կրթագիտական կառույցների ընդգրկումը: Երկրորդ փուլում հնարավորություն կընձեռվի ընդլայնելու Ցանցային հայագիտական համալսարանի գործունեության շրջանակը՝ ներգրավելով կրթագիտական նոր կառույցներ:

Կղիտարկվի կրթաթոշակներ տրամադրելու հնարավորությունը, ինչպես կարճաժամկետ հատվածում, այնպես էլ ամբողջական կրթական ծրագրի յուրացման համար: Դրանք կտրամադրվեն Ցանցային հայագիտական համալսարանում ընդգրկված ուսանողներին և հետազոտողներին սովորելու և հետազոտություններ իրականացնելու ինչպես Հայաստանի, այնպես էլ օտարերկրյա պետությունների բուհերում և կրթագիտական կառույցներում: Հայագիտության զարգացմանն ուղղված գոր-

ծընթացներն արդյունավետ դարձնելու նպատակով կարող է դիտարկվել հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող մարմնի ստեղծում, օրինակ՝ հիմնադրամ:

Համաձայն հայագիտության զարգացման ռազմավարության թիրախային ուղղությունների կմնական Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման ռազմավարությունը, որում կներկայացվեն ծրագրային միջոցառումները և ֆինանսավորումը՝ Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման գործընթացն ապահովելու համար:

Ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանալու ՀՀ պետական բյուջեն, Ցանցային հայագիտական համալսարանում ընդգրկված կրթագիտական կառույցների, ինչպես նաև միջազգային գործընկեր կառույցների ներդրումային ֆինանսական միջոցները:

Նշենք, որ 2012 թվականից ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվում է օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդման ծրագիրը: 2023 թվականին ծրագիրն իրականացվել է 13 պետությունների 15 կառույցներում: Ծրագիրը, որում ընդգրկված է շուրջ 200 ուսանող, իրականացվում է օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության և կրթագիտական համապատասխան կառույցի միջև ստորագրված դասավանդման և հետազոտության համալսարանային վերաբերյալ պայմանագրերի հիման վրա: Օտարերկրյա պետությունների համալսարանների, թանգարանների և գիտահետազոտական կառույցների հենքի վրա ներկայում գործում են 100-ից ավելի հայագիտական կենտրոններ, որոնք կարող են դիտարկվել որպես առանձին հաստատություններ կամ միավորվելով կազմել կրթագիտական հանրապետական ցանցային կառույց՝ մեկտեղելով կրթագիտական կարողությունը:

Դեղին ՀՈՎՈՐԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է կինոռեեստրը վարելու և ազգային ֆիլմի փաստաթղթերը մշտական պահպանության հանձնելու կարգը:

ՀՀ կինոնստոգրաֆիայի ոլորտում ներկայում կարգավորված չեն հայկական ֆիլմերի վիճակագրական հաշվառման և պահպանության մեխանիզմները, հետևաբար չի գործում մեկ միասնական տեղեկատվական հարթակ, որտեղ հավաքագրված կլինի հայկական արտադրության ֆիլմերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Միաժամանակ, ազգային ֆիլմերի պահպանությունը, հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների պաշտպանությունը և կինոժառանգության հանրային օգտագործումը կազմակերպելու համար ազգային ֆիլմի փաստաթղթերը պետք է հանձնվեն մշտական պահպանության Ազգային մարմին և ՀՀ ազգային արխիվ: Այս գործընթացը եւս ներկայում չի իրականացվում, ինչը ռիսկային է հայկական ֆիլմերի պահպանման, հեղինակային և հարակից իրավունքների կարգավորման տեսանկյունից:

Կինոռեեստրը վարելու և ազգային ֆիլմի փաստաթղթերը մշտական պահպանության հանձնելու գործընթացի կարգավորումն առաջին հերթին բխում է «Կինոնստոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի կիրարկման, ինչպես նաև ազգային ֆիլմերի պահպանման մեխանիզմների կարգավորման անհրաժեշտությունից:

Կարգով սահմանվել է կինոռեեստրը ազգային ֆիլմերի վիճակագրական հաշվառումը կազմակերպելու նպատակով ստեղծված տվյալների հիմնապահոց է: Կինոռեեստրը ստեղծում է դրա հետագա վարումն իրականացնում է մշակութային հիմնադրամը՝ էլեկտրոնային եղանակով: Կինոռեեստրում գրանցվում են ազգային ֆիլմերի, դրանց ստեղծագործական խմբի անդամների ու ֆիլմարտադրողների մասին տվյալները:

Կինոռեեստրը բաղկացած է չորս բաժնից՝ խաղարկային, վավերագրական, անիմացիոն և այլ: Կինոռեեստրի բաժիններից յուրաքանչյուրը բաղկացած է երկու ենթաբաժնից՝ լիամետրաժ և կարճամետրաժ:

Կարգով սահմանվել է նաև, թե ինչպիսի բովանդակություն է ներառում կինոռեեստրը՝ ֆիլմի ժանրից, արտադրության երկրից մինչև ցուցադրություններ, մրցանակներ և այլն:

Կինոռեեստրում առկա տեղեկատվությունը բաց է և հասանելի ցանկացած շահագրգիռ անձի համար՝ մշակութային հիմնադրամի կայքում:

Ազգային ֆիլմի պահպանությունը, հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների պաշտպանությունը և կինոժառանգության հանրային օգտագործումը կազմակերպելու նպատակով ազգային ֆիլմի փաստաթղթերը, այդ թվում՝ ֆիլմի հիմնանյութերն ու ֆիլմի բնօրինակը հանձնվում են մշտական պահպանության մշակութային հիմնադրամին, որը փաստաթղթերի պատճենները հանձնում է Հայաստանի ազգային արխիվ:

Ազգային ֆիլմի համարվում կինոթատրոնում ցուցադրելու համար նախատեսված այն ֆիլմը, որը բավարարում է կարգով սահմանված պայմանները, այն է՝ ֆիլմի ստեղծագործական խմբի մեծամասնությունը ՀՀ քաղաքացի է, ֆիլմի սցենարի հեղինակը և (կամ) բեմադրող ռեժիսորը ՀՀ քաղաքացի է, ինչպես նաև ֆիլմարտադրությանը մասնակցում է ՀՀ-ում պետական գրանցում ստացած ֆիլմարտադրողը: Ազգային ֆիլմեր են համարվում նաև այն ֆիլմերը, որոնց գույքային իրավունքները ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով փոխանցվել են Հայաստանի Հանրապետությանը:

Հ. Հ.



Կառավարության որոշմամբ

Համակարգ

Կբարելավվեն շենքային պայմանները

ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄՍ նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերի իրականացման համար հատկացված միջոցների միջև կատարվել է վերաբաշխում՝ 299 մլն 252 հազար դրամ գումարի չափով: Վերաբաշխման արդյունքում առաջացող մնացորդը՝ 14,5 մլրդ դրամի չափով, կուղղվի Կառավարության պահուստային ֆոնդ:

Որոշման ընդունմամբ կապահովվեն մի շարք կրթական, մշակութային և մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման և գույքային հագեցվածության գործընթացները, որոնք կրում են շարունակական բնույթ: Այն առաջնային և կարելի է համարել խնդիրներից է մշակված ոլորտներում պետության որդեգրած քաղաքականության պատշաճ իրականացման համար:

Ըստ այդմ որոշմամբ 223 մլն 101 հազար դրամ կուղղվի հաստատությունների շինարարական աշխատանքների իրականացմանը, որից 50 մլն կտրամադրվի Մատենադարանե Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի համար օդափոխության համակարգի փոխարինմանը: Որոշմամբ հատկացվող գումարների շրջանակում կլուծվեն մի շարք հրատապ խնդիրներ՝ ջեռուցում, տանիք, պատուհաններ, օդափոխության համակարգ, սանհանգույցներ:

76 մլն 150 հազար դրամ կուղղվի հաստատությունների գույքի ձեռքբերմանը, որից շուրջ 50 մլն դրամ կտրամադրվի Երեւանի թատրոնի և Կինոյի պետական ինստիտուտի Փելեշյանի անվան տաղավարի գույքի և տեխնիկայի, իսկ շուրջ 14 մլն դրամ՝ Երեւանի կամերային պետական թատրոնի համար ծայնային տեխնիկայի զննմանը:

Վերաբաշխվող գումարի շրջանակում կրթական ոլորտի կապիտալ ծրագրերին կուղղվի 193.2 մլն դրամ, մշակույթի ոլորտին՝ 72.8 մլն դրամ գումար: Որոշմամբ նախատեսվող հատկացումների շրջանակում առկա են նաև անվանի դիրիժոր և երգահան Հովհաննես Չեփչյանի աշխատասենյակի, ինչպես նաև հայտնի ռեժիսոր և սցենարիստ Արտավազ Փելեշյանի անվան տաղավարի գույքով ապահովման ծախսեր:

Հ. Հ.

Հաստատվել է արտադպրոցական ծրագրերի երաշխավորման կարգը

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ներկայացրած արտադպրոցական ծրագրերի երաշխավորման կարգը, արտադպրոցական ծրագրի ձևաչափը և վերջնարդյունքները՝ ըստ սահմանված ուղղությունների: Հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մայիսի 1-ից:

Փաստաթղթով կարգավորվում են արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների (մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, մանկապատանեկան մարզադպրոցների, ինչպես նաև երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների արտադպրոցական ծրագրերի երաշխավորման և արտադպրոցական ծրագրի ձևաչափի և վերջնարդյունքների հետ կապված հարաբերությունները:

Արտադպրոցական ծրագրերը կարող են մշակվել ինչպես մեկ կամ երկու ուղղությամբ, այնպես էլ համակցված (հիբրիդային)՝ ծրագրով հաշվի առնելով երեխաների ընդունակությունները, նախասիրությունները, հոգեբանական, ֆիզիոլոգիական, տարիքային առանձնահատկությունները, կարողունակությունների մակարդակը: Արտադպրոցական ծրագրերը մշակում են վերոնշյալ հաստատությունները (մանկապատանեկան մարզադպրոցների դեպքում՝ մասնագիտացված բուհը): Արտադպրոցական ծրագրերն իրականացվում են առարկայական ծրագրերի միջոցով, որը մշակում է մասնագիտացված միջին կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը կամ այլ կազմակերպություն: Հաստատության մանկավարժական աշխատողները (խմբակավարները) կարող են մշակել հեղինակային արտադպրոցական ծրագրեր:

Ծրագրի նախագծերն անհրաժեշտ է սահմանված ժամկետներում ներկայացնել ԿԳՄՍ նախարարություն՝ մասնագիտական փորձաքննության նպատակով:



Նախագիծը նախարարությունը փորձաքննության է ուղարկում գիտական, կրթական մասնագիտական ծրագրեր իրականացնող հաստատություն:

Դրական փորձագիտական եզրակացություն ստացած ծրագրերը ԿԳՄՍ նախարարի հրամանով երաշխավորվում են գործածության: Բացասական եզրակացության դեպքում ծրագիրը համապատասխան հիմնավորումներով նախարարության կողմից վերադարձվում է հեղինակին՝ լրամշակման:

Հրամանով հաստատվել են նաև արտադպրոցական ծրագրի ձևաչափը և վերջնարդյունքները՝ ըստ սահմանված ուղղությունների: Սահմանվել են արտադպրոցական ծրագրի բովանդակության ներկայացումը՝ ըստ ուղղությունների, վերջնարդյունքները, ինչպես նաև հաստատության կողմից ներկայացրած և նախարարի հրամանով երաշխավորված արտադպրոցական ծրագրի ձևաչափը:

Հաստատություններն իրենց իրավունքների և ազատությունների շրջա-

նակում կարող են ուսումնական պլանի մշակման գործընթացն իրականացնել ստեղծագործաբար և դրանում առավելագույնս հաշվի առնել անհրաժեշտ բոլոր առանձնահատկությունները՝ շեշտադրումը դնելով տեղայնացման անհրաժեշտության և կարելիության վրա:

Կարգը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, որի ապահովումը ենթադրում է արտադպրոցական կրթական ծրագրերի արդիականացում, լրամշակում, արտադպրոցական կրթական ծառայությունների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության, ինչպես նաև պետական և համայնքային բյուջեից ֆինանսավորվող արտադպրոցական կրթական ծրագրերի թափանցիկության ապահովում:

Այսպիսով կստեղծվեն արտադպրոցական կրթական ծառայությունների վերահսկման հստակ մեխանիզմներ, և մշտադիտարկումների արդյունքում կբարելավվի մատուցվող ծառայությունների որակը:

Յեղիսե ՀՈՎՀՄԱՆՆԻՍՅԱՆ

Մասնագիտական կրթություն և ուսուցում

Քննարկումների հարթակի ամենամյա հանդիպում

«Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում ՄԿՈւ արդիականացում» (ՄԱՎԵՏԱ) ծրագրի շրջանակում «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն կազմակերպել է մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈւ) ոլորտում գործող դոկտոր կազմակերպությունների երկխոսության/քննարկումների հարթակի տարեկան հանդիպումը:

Հարթակի հերթական հանդիպման նպատակն էր քննարկել Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացմանն ու խթանմանն ուղղված գործողությունները: Երկու օր տեւած համաժողովին մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, Հայաստանում Շվեյցարական համագործակցության գրասենյակի (SDC), ՄԱԶԾ և այլ տեղական ու միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

ՀՀ ԿԳՄՍՆ նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյանը շնորհակալություն է հայտնել երկխոսության հարթակի շրջանակում կազմակերպվող քննարկումների համար ընդգծելով դրա կարելիությունը: Նա նշել է, որ բացի ոլորտային աշխատանքներից՝ այս տարի ՄԿՈւ գործընկերներն իրենց ջանքերը մեկտեղել են աջակցելու Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ իրականացնելով սոցիալական, կրթական և այլ ծրագրեր: Արմենուհի Պողոսյանը փաստել է՝ ՀՀ կառավարությունն իրականացնում է մի շարք աջակցության ծրագրեր՝ սովորողների կրթության շարունակականության ապահովման, կրթաթոշակների տրամադրման և այլ հարցերում հորդորելով գործընկերներին ևս հնարավորինս մասնակից լինել վերոնշյալ ծրագրերին:

Արմինե Պողոսյանը ներկայերին տեղեկացրել է, որ վերջերս ՀՀ կառավարությունը հաստատել է Մասնագիտական կրթության և ուսուցման մասին նոր օրենքը, որը ներկայացվել է Ազգային ժողով: Նրա խոսքով՝ ոլորտային օրենքը ենթարկվել է արմատական փոփոխության՝ կառուցվածքի, սկզբունքների, մոտեցումների, գաղափարների և բովանդակության տեսանկյունից: Նա շնորհակալություն է հայտնել փորձագետներին և գործընկերներին, մասնավորապես՝ GIZ-ին, օրենքի մշակմանն աջակցելու համար: Արմինե Պողոսյանն ընդգծել է, որ օրենքի նախագիծը ներկայացրել է միջազգային փորձաքննության, որի արդ-

յունքում ստացվել է դրական եզրակացություն:

Համաժողովին ողջույնի խոսքով հանդես է եկել «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ-ի նախագահ Սկրտիչ Ալվազյանը՝ ընդգծելով հարթակի պարբերական հանդիպումների կարելիությունը:

ՀՀ-ում Շվեյցարիայի փոխդեսպան և հավասարապես Հայաստանում Շվեյցարիայի զարգացման համագործակցության համար պատասխանատու Վերներ Թուրքը ընդգծել է, որ մասնագիտական կրթության, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտի արդյունավետ բարեփոխումների համար առաջնային է պետական կառույցների և մասնավոր հատվածի միջև սերտ համագործակցությունը: Նա նաև անդրադարձել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար աջակցության ծրագրերի անհրաժեշտությանը՝ «Մենք ցանկանում ենք աջակցել պետությանը՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար Հայաստանում արժանապատիվ ապագա ստեղծելու գործում»:

Համաժողովի ընթացքում ներկայացվել են ԿԳՄՍ նախարարության կողմից ՄԿՈւ ոլորտի իրագրված և տեսանելիության

բարձրացմանն ուղղված գործիքները, ինչպես նաև գործընկերների կողմից ակնկալվող աջակցությունն այս հարցում: Հանդիպմանը ներկայացվել է նաև «Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում ՄԿՈւ արդիականացում» (MAVETA) ծրագրի հաղորդակցման ռազմավարությունը:

Հանդիպման երկրորդ օրը մասնակիցներին հնարավորություն է ընձեռվել՝ քննարկելու ՄԿՈւ ոլորտի առաջիակազմման համար անհրաժեշտ գործողությունները, ինչպես նաև մշակելու առաջիակազմման ընդհանուր մոտեցում և գործողությունների պլան՝ սահմանելով յուրաքանչյուր շահագրգիռ կողմի հնարավոր ներդրումը: Նշենք, որ ՄԱՎԵՏԱ ծրագիրը ֆինանսավորվում է միջազգային և տեղական կազմակերպությունների լայն կոալիցիայի կողմից՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) գլխավորությամբ և համաֆինանսավորվում ՀՀ կառավարության, Ավստրիական զարգացման գործակալության (ADA), Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ), Շվեյցարիայի եկեղեցու օգնության (HEKS/EPER) և Իզմիրյան հիմնադրամի Վանանդ Ագրո ՓԲԸ-ի կողմից:



# Երաժշտությանը բժշկելու արվեստը (հատված Սուրեն Գյուլխասյանի աշխատությունից)

սկիզբը՝ նախորդ համարում

## Երաժշտությունը՝ գենը եւ բալասան

Թե ինչ ազդեցություն կարող է ունենալ երաժշտությունը մարդու հոգեկան աշխարհի վրա, հայտնի էր դեռևս Յին Յու-նաստանում, որտեղ երաժշտությունը համարվում էր փիլիսոփայության մի մասը: Յույն փիլիսոփա եւ մաթեմատիկոս Պյութագորասը մաթեմատիկայի դասերն անցկացնում էր երաժշտության ներքո: Նա առաջիններից էր, ով ցույց տվեց երաժշտության դերը եւ ազդեցությունը մարդու վրա: Յույն բժիշկները երաժշտությունն օգտագործում էին մի շարք հիվանդությունների բուժման նպատակով: Սակայն հայտնի է երաժշտության հակառակ ազդեցությունը մարդու վրա: Յայտնի է, որ վաղ ժամանակներում գոյություն է ունեցել տանջալից մահապատժի տեսակ, որն իրականացվել է երաժշտության միջոցով:


Երաժշտական մի շարք ուղղություններ կան, որոնք բացասաբար են ազդում մարդու ֆիզիկական եւ հոգեկան աշխարհի վրա: Ուսումնասիրություններով պարզվել է, որ տասը րոպե ռոք երաժշտություն լսելուց հետո դպրոցահասակ երեխաները որոշ ժամանակով մոռանում են բազմապատկման աղյուսակը: Երաժշտությունն ազդում է նաեւ վարորդների վրա: Ոչնչով բարձր երաժշտության տակ վարորդն ակամայից արագացնում է ընթացքը, իսկ հանգիստ ու դանդաղ երաժշտությունը նպաստում է անշտապ ընթացքին: Յնուտ մարդկանց ձեռքում երաժշտությունը կարող է դառնալ մարդկանց լայն զանգվածների վրա ներգործելու միջոց: Ընդ որում, այդ ներգործությունը կարող է լինել թե դրական, եւ թե բացասական: Իզուր չէր Պլատոնը, խիստ կարեւորելով երաժշտության ազդեցությունը հասարակության վրա, իր «Պետությունը» աշխատության մեջ հորդորում պետական այրերին վերահսկողություն հաստատել երաժշտության եւ երգերի նկատմամբ:

Յակամարտող պետությունների հատուկ ծառայությունները սառը պատերազմի փուլում երբեմն օգտագործում են երաժշտությունը որպես բնակչության բթացման զանգվածային խոցման գեներ: Նպատակը՝ բնակչության ինքնապաշտպանության կամքի թուլացումն է: Ընդ որում, հաճախ դա արվում է հայրենական «վայ-երաժիշտների» եւ դրանց աջակիցների միջնորդությամբ:

## Երաժշտությունը հատուկ ծառայությունների զինանոցում

Երաժշտության դերի մասին է վկայում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ԱՄՆ հատուկ ծառայությունների կողմից մշակված եւ հաջողությամբ իրագործված MUZAK ծրագիրը, որի նպատակն էր երաժշտության միջոցով կոտրել նացիստական Գերմանիայի զինվորների բարոյական ոգին, սերմանել անկումային տրամադրություններ եւ ապագայի նկատմամբ անվստահություն:

Ծրագրում ներգրավել էին պատերազմից առաջ Գերմանիայից արտագաղթած հայտնի դերասանուհի եւ երգչուհի Մառլեն Դիտրիխին, որի կատարմամբ ծայնագրված երգերը լսում էին ամբողջ Գերմանիայի տարածքում: Յատկապես մեծ համբավ էր ձեռքբերել «Լիլի Սառլեն» երգը, որում երգվում էր զինվորի սիրելիի, կարոտի եւ տուն վերադառնալու ցանկության մասին: MUZAK ծրագրի մանրամասները մինչեւ այսօր գաղտնածածկված չեն, սակայն ամերիկյան հետախուզության տվյալներով՝ այդ ծրագիրը նույնքան կործանարար



էր գերմանացիների ոգու համար, որքան եւ ավիացիայի հարձակումները: Այդ հաղորդումներին հաջողվեց բարձրացնել անկումային տրամադրությունները հասարակության մեջ այնքան, որ նրանք այլևս չէին հավատում նացիստական քարոզչությանը:

Տարբեր պետությունների հատուկ ծառայություններն օգտագործում են երաժշտությունը հակառակորդի մտավոր եւ բարոյական զարգացման եւ կայունության մակարդակի բացահայտման համար: Դրա համար օգտագործվում են սկանավորման պասիվ եւ ակտիվ մեթոդներ:

**Պասիվ** մեթոդները ներառում են ՋԼՄ-ներից, հայտարարություններից եւ այլ բացառություններից հետագոտվող հասարակության արդի մշակույթի, հոգեւոր արժեքների, ճաշակների մասին մանրամասն վիճակագրական տվյալների հավաքագրում: Ստացված տեղեկությունների հիման վրա կազմվում է նախնական պատկերացում այդ հասարակության գիտակցության մակարդակի եւ ոգու մասին, ինչը թույլ է տալիս օբյեկտիվորեն գնահատել հակառակորդի հոգեբանական եւ բարոյական պաշտպանվածությունը, որոշել նրա թուլ կետերը, հաշվարկել սառը պատերազմի փուլում, այնուհետեւ՝ թե՛ պատերազմում հաղթելու համար անհրաժեշտ ուժերը:

**Ակտիվ սադրիչ** մեթոդներով ստուգում են լայն զանգվածների արձագանքը այսպես կոչված «սադրիչ թեստերին»: Օրինակ՝ եթե է հեռարձակվում իմաստով թեթեւ անմեղ պարզունակ երգ կյանքի վայելքների մասին, որն ուղեկցվում է թեթեւ երաժշտությամբ եւ անհասկանալի պարային շարժումներով: Որպես կանոն, դրանցում զովերգվում է անհոգ կյանքը, բոլորի եւ ամեն ինչի վրա թքած ունենալու կարողությունը: Կախված նրանից, թե ինչպես է հասարակությունը արձագանքում այդ կարգի երաժշտությանը, գնահատվում է նրա պաշտպանվածության աստիճանը: Այս եղանակով հատուկ ծառայությունները սկզբում թմրեցնում են հասարակության զգոնությունը, այդպիսով ճնշելով նրա «իմունային» պաշտպանիչ համակարգը, որից հետո հարձակվում են հանդիպելով թույլ դիմադրության:

## Ժողովրդական երաժշտությունը

Մարդն իր հայրենիքը ստանում է իբրեւ ժառանգություն կյանքի հետ միասին: Յայրենիքը սիրում են բոլորը՝ ամեն մեկը յու-

րովի: Ժողովրդական արվեստն արտացոլում է պետության եւ ժողովրդի պատմությունը, մարդկանց հետ կատարված իրադարձությունների օրինաչափությունները, ժողովրդի հոգեւոր էվոլյուցիան քաղաքակրթության զարգացման տարբեր փուլերում:

Ժողովրդական երաժշտությունը ժողովրդի մշակութային անձնագրի կարեւորագույն էջերից մեկն է: Այն պահպանել է ժողովրդի օրինաչափության արվեստի առանձնահատկությունները եւ, փոխանցվելով սերնդեսերունդ, հասել է մեզ: Ժողովրդական ստեղծագործության պտուղները հավերժական զանձեր են, որոնք չունեն պիտանիության ժամկետ: Այդ զանձարանի մեջ պատահաբար սխալմամբ ներթափանցած «նմանվածքները» չեն դիմանում ժամանակի փորձությանը, մարում են եւ փոշիանում: Դրանց մատնում են սուտը եւ կեղծիքը, որոնց կյանքի տեսողությունը, ինչպես ժողովուրդն է ասում, մինչեւ 40 օր է:

Յայ ժողովրդական երաժշտության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում աշուղական արվեստը, որը տարածվել է 16-17 դարերում եւ փոխարինել է գուսանական արվեստին: Սա իմպրովիզացիոն արվեստի բացառիկ տեսակ է, որն առանձնանում է խոսքի եւ երաժշտության ներդաշնականությամբ եւ անկեղծ հուզականությամբ: Անհատի ազատ ստեղծագործության արդյունքում ծնված աշուղական երաժշտությունը արձագանք է գտնում ունկնդիրների հոգում իր անկեղծության եւ ազնվության շնորհիվ:

## Կեղծ երաժշտության վտանգները

Որպես կեղծ երաժշտության օրինակ կարող է ծառայել ժամանակակից շուրքիզների արհեստածին երաժշտությունը, որը ստեղծվել է փոփ, ռոք եւ ջազ հիթերի անճաշակ կոլաժի միջոցով: Այդ արտադրանքը նույնիսկ դժվար է երաժշտություն անվանել: Այն նման է վաճառքի նպատակով գողացած ավտոմեքենայի, որի մասերը եւ շարժիչը փոխարինվել են այստեղից-այնտեղից հավաքած մասերով, թափքը ներկվել է, պաստառները փոխվել են՝ հնամաշ նստարանները քողարկելու համար:

Եժանագին կեղծ նմանվածքները ճանաչելի են առաջին իսկ նոտաներից: Իրար կպցրած երաժշտական կտորների «կարերը» հատկապես զգացվում են նախերգանքի, հիմնական թեմայի եւ կրկների միաց-

ման հատվածներում՝ «սողցելով» երաժշտասերների լսողությունը: Նրանք հեշտորեն ախտորոշում են կեղծիքը եւ ի վիճակի են պաշտպանվել դրանից: Ավելի վտանգավոր է այդպիսի «կրկածը» երաժշտական ճաշակ չունեցողների, ինչպես նաեւ դեռու չձեւավորված դեռահասների եւ երեխաների համար, որոնք չեն հասցրել իմունիտետ ձեռքբերել կեղծ երաժշտության նկատմամբ, եւ անխոչընդոտ կլանում են այն:

Երբեմն հեռարձակող անձնակազմի ոչ պատշաճ մակարդակով պայմանավորված, երբեմն էլ զուցե գիտակցաբար հեռուստատեսությամբ եւ ռադիոյով հեռարձակվում են անիմաստ բառերով եւ կրկնվող մեղեդիով անճաշակ երգեր, որոնք ծամնի պես կպնում են ունկնդիրներին եւ ամենուր հետապնդում նրանց: Այդպիսի «ծեփոններից» նույնքան դժվար է ազատվել, որքան եւ կաշուն ճանճչեղից եւ տզագող մոծակներից: Բայց թե վերջիններիս ազդեցությունը ժամանակավոր է, ապա այդ շինծու երգերի ազդեցությունը կարող է անհետեւանք չճնալ՝ առաջացնելով անձի զանազան շեղումներ հոգեւոր թունավորման պատճառով:

Առանձին խումբ են կազմում կեղծ ռազմահայրենասիրական երգերը: Դրանք «ծեփոնները» կրկնակի անբարոյական են, քանի որ, խաղալով մարդկանց հոգու ամենուրեք լարերի վրա, խաղում են նաեւ հայրենիքի ճակատագրի հետ: Դրանք մեծ վտանգ են ներկայացնում հասարակության եւ պետության համար: Լինելով եւսթյամբ կեղծ, այդ երգերը նույնպես կեղծ հայրենասիրություն են սերմանում, առաջացնում կեղծ մարտական ոգի՝ անհիմն ինքնավստահություն, պարծեցկություն, սնապարծություն եւ նման դրսեւորումներ: Սրանք վտանգ են ներկայացնում բանակի մարտական ոգու եւ պատրաստվածության համար:

Բարեբախտաբար, առողջ անհատի օրգանիզմում գործում են պաշտպանիչ մեխանիզմներ ի դեմս ինտուիցիայի եւ իմունիտետի պահակային օրգանի՝ ուրցագեղձի, որն արգելափակում է կեղծ երաժշտական ինֆորմացիայի ներթափանցումը եւ պաշտպանում օրգանիզմը «երաժշտական թունավորումից»: Ուրցագեղձի պայքարը, որպես կանոն, տալիս է արդյունք, սակայն դա ծանր է նստում անձի հոգեւոր, մտավոր եւ ֆիզիկական առողջության վրա: Յաճախակի գործածումից եւ գերլարումներից գեղձը հյուսվում է, թուլանում են նրա իմունային եւ ինտուիտիվ պաշտպանիչ հատկությունները:

Տրամաբանական է, որ որքան կիրք է անհատը եւ զարգացած է նրա բանակաւորությունը, այնքան նա ավելի պաշտպանված է: Դժվար է վարակել կեղծ երաժշտությամբ մի անձի, ով մանկության եւ դեռահասության տարիքում լսել է ճշմարիտ երաժշտություն՝ լինի դասական թե հանրամատչելի: Ուստի, շատ կարեւոր է զբաղվել երեխաների երաժշտական կրթությամբ անկախ նրանից, թե ինչ մասնագիտություն նրանք կընտրեն ապագայում: Երաժշտական կրթությունը ոչ միայն կհարստացնի նրանց հոգեպես, այլեւ կօգնի կյանքում ճանաչել կեղծը եւ պաշտպանված լինել նրա վնասակար ազդեցությունից:

*Երաժշտությունը ոգեշնչում է ամբողջ աշխարհին, հոգում թեւեր է տալիս, նպաստում է երեւակայության թռիչքին: Երաժշտությունը կյանք եւ ուրախություն է հաղորդում ամենքին: Այն կարելի է անվանել բոլոր գեղեցիկ եւ վեհ երեւոյթների մարմնացում:*

Պլատոն

Սուրեն ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ



Ամանորի պատմությունից

Թե աշխարհում փակ դռներ կան, բող որ բացվեն այս գիշեր... ՄԵՏԱՔՄԵ

Նոր տարին ամենահին ու ամենաշուքով նշվող տոնն է աշխարհում: Այն սկիզբ է առել անհիշելի ժամանակներից: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր ավանդույթներն ու սովորույթները, որոնք պահպանվում են հազարամյակներ: Երբեմն տարբեր երկրների սովորույթներ համընկնում են, բայց դրանց դրսևորումները, որպես կանոն, ինքնատիպ են: Մի բան հատուկ է բոլորին. ամբողջ աշխարհում մարդիկ ցանկանում են, որ Նոր տարին նշվի հավուր պատշաճի, ու բոլորն էլ անխտիր հավատում են անանորյա իրաշքերին...

Հին հայերը Նոր տարին տոնել են մարտի 21-ին: 4516 տարի առաջ, երբ Հայկ նահապետը նետահարեց Բելին, եւ հայերը սկսեցին նոր թվարկություն, Նոր տարին սկսեցին նշել Նավասարդի 1-ին (օգոստոսի 11) ի նշան այդ պատմական կարեւոր իրադարձության:

Հայաստանում այսօր պահպանվել են բազմաթիվ սովորույթներ՝ սկսած հատուկ ուտեստներ պատրաստելուց: Ավանդաբար, հին տարվա վերջին օրը բնակարանները մաքրում են եւ դեմ նետում հին, կոտրված կամ վնասված իրերը: Կան մի շարք «չգրված օրենքներ», որոնց հետևում է յուրաքանչյուր հայ. ամանորի գիշերը չի կարելի լաց լինել կամ շուտ պառկել քնելու, քանի որ ինչպես դիմավորես տարին, այնպես էլ այն կանցնի: Նոր տարին պետք է դիմավորել՝ առանց պարտքերի եւ լի գրպաններով: Նոր տարվա գիշերը փռշտալը համարվում է հաջողության նշան... Այս ցուցակը կարելի է անվերջ շարունակել:




Լինելով սպասված եւ գեղեցիկ տոն՝ Ամանորը «ստիպում է» մարդկանց ուշադիր լինել իրենց սեղանների եւ արտաքինի համդեպ, որպեսզի գեղեցիկ են խնամված տեսք ունենան տարեմուտին եւ իրենք, եւ իրենց օջախները, ձգտում են, որ շուրջըրջուրը լինի վառ ու գունավոր, ինչպես տոնածառը: Եվ բոլորն էլ ճիշտ կեսգիշերին մտքում երագանք են պահում՝ հավատալով, որ գալիք տարին ավելի լավը կլինի. չէ՞ որ ամանորյա իրաշքերն ամենալավն ու գեղեցիկն են:

Ամանորը տարբեր երկրներում հունվարի 1-ից սկսել են տոնել տարբեր ժամանակներում: Գերմանիայում՝ 16-րդ դարի 2-րդ կեսին, Ֆրանսիայում՝ 17-րդ դարում, Անգլիայում եւ Ռուսաստանում՝ 18-րդ դարից:



Ժամանակի ընթացքում որպես Նոր տարվա խորհրդանիշ ընտրվեց մշտադալար եղեմին: Եղեմնու գարդարումը կապված է հետևյալ լեգենդի հետ: Էլգասուն, Ծննդյան տոների նախօրյակին, գերմանական բողոքականության հիմնադիր Մարտին Լյութերը, տուն վերադառնալով (դա տեղի է ունեցել 1513թ. վերջին), այնքան է զմայլվել աստղազարդ երկնքով, որ նրան թվացել է, թե աստղերով են զարդարված նաեւ իր շուրջը գտնվող եղեմիների ճյուղերը: Տուն մտնելով՝ Լյութերը սեղանին է դրել մի եղեմի եւ զարդարել փայլուն աստղիկներով ու վառվող մոմերով: Եղեմնու գարդարանքը հետագայում դարձավ ավելի հարուստ:




Ամերիկացի Է.Ջոնսոնը 1882թ. առաջարկեց եղեմին լուսավորել էլեկտրականությամբ: Նրա հայրենակից Ռ.Մորիսը 1895թ. պատրաստեց փոքրիկ էլեկտրական լամպերից կազմված «դրասանգ», որը հնարավորություն ընձեռեց ազատվելու մոմերից, քանի որ դրանք հաճախ հանգեցնում էին հրդեհի: Առաջին «դրասանգը» լամպերի շղթան, վառվել է վաշինգտոնի Սպիտակ տան առջև:

Իսկ ինչպե՞ս «ծնվեց» Չմեռ պապը: Բոլորը նրան ընդունում են՝ որպես հավերժ ծեր եւ անմահ մի մարդու, եւ ոչ ոք չի էլ կարող ենթադրել, թե նա... քանի տարեկան է: Կախարդական այս ծերունու կերպարը ձևավորվել է դարերի ընթացքում, եւ յուրաքանչյուր



ժողովուրդ ինչ-որ բան է ավելացրել նրա պատմությանը: Սակայն պարզվել է, որ այդ պատմությունն ունի իրական հիմքեր:

4-րդ դարի վերջում փոքր Ասիայում ապրել է մի արքեպիսկոպոս՝ Նիկողայոս անունով: Ըստ ավանդության՝ նա եղել է շատ բարի մարդ եւ մի անգամ նույնիսկ փրկել է աղետից տուժած ընտանիքի երեք աղջիկների՝ նրանց տան պատուհանից ներս նետելով ոսկով լի տոպրակ: Նիկողայոսի մահվանից հետո նրան համարեցին սուրբ: 19-րդ դարի վերջում այն եկեղեցին, որտեղ թաղված էր նա, թալանեցին իտալացի ծովահենները, հափշտակեցին նաեւ սրբի աճյունը եւ տարան իրենց հայրենիք: Այս պատմությունն այնպիսի աղմուկ բարձրացրեց, որ Նիկողայոսը դարձավ աշխարհի տարբեր երկրների քրիստոնյաների հարգանքի ու երկրպագության կերպար: Նա սկսեց Ծննդյան տոնին, ապա եւ Ամանորին այցելել երեխաներին:




Բարի ծերուկին տարբեր կերպ են անվանում այլեւայլ երկրներում. Իսպանիայում՝ Նոել պապ, Ռուսիայում՝ Մոշ Ջարիելե, Հոլանդիայում՝ Սինտե Կլասա, Անգլիայում եւ ԱՄՆ-ում՝ Սանտա - Կլաուս, մեզանում՝ Չմեռ պապ:



Հետաքրքիր է, որ մարդիկ սկզբում նվերներ չէին սպասում Չմեռ պապից, այլ... իրենք էին նրան ընծայում ինչ-որ բան: Սկզբնապես հին ժամանակներում հավատում էին, որ դժբախտությունից ու փորձանքներից մարդկանց հեռու են պահում նրանց նախնիների հոգիները, եւ ահա վերջիններիս գթասրտությունը շարժելու համար պետք էր մատուցել նվերներ, ինչը եւ արվում էր Չմեռ պապի միջոցով: Հետագայում Չմեռ պապը վերափոխվեց, եւ նվերներ բաժանելու գործում նրան օգնելու համար ի հայտ եկավ Չյունամուշը: Բոլոր երեխաներն սկսեցին անհամբերությամբ սպասել Ամանորի գիշերվան, երբ կգար Չմեռ պապն ու իրենց կրթերը իրաշալի նվերներ: Արդեն կայունապես ձևավորվել էր նրա կերպարը՝ թավ բեղ ու մորուքով բարի ծերունի՝ վառ կարմիր կամ կապույտ մուշտակով, գավազանով եւ, իհարկե, նվերների կախարդական պարկով:

Չմեռ պապի նվերները մանուկներն իրենց ամենըությամբ ընդունում են՝ որպես պարգև Աստծուց: Հայ ժողովուրդի մեջ ընդունված է Ամանորը կոչել նաեւ Կաղանդ:



Այն նշանակում է որեւէ տոն նշելու կոչ, իրավեր: Հետագայում կաղանդը Հայաստանում ստացել է տարեմուտի իմաստը:

Քրիստոնեական առումով՝ Ամանորը հաշվետվության յուրօրինակ մի օր է՝ յուրաքանչյուր մարդու համար: Օր, երբ ամփոփվում են տարվա ընթացքում կատարված գործերը:

Սուրբ Ծնունդը աշխարհի քրիստոնյաների ամենամեծ եւ սիրված տոներից է: Իր թե՛ նշանակությամբ, եւ թե՛ խորհրդով Ամանորը գիշերն է Սուրբ Ծննդյանը: Ամանորն ինքնին օրացուցային փոփոխման երեւոյթ է, եւ իր մեջ որեւէ խորհուրդ չունի: Իսկ Սուրբ Ծնունդը ամբողջությամբ խորին խորհուրդ է՝ Աստծո Որդու Ծնունդը, որը մարդկության համար դառնում է նոր եւ անվերջանալի սկիզբ: Իզուր չէ, որ ավելի քան 2000 տարի մարդկությունն իր տոմարական բոլոր հաշվարկները կապում է Քրիստոսի Ծնունդով՝ նախքան Քրիստոս եւ Քրիստոսի Ծննդից հետո:

Սուրբ Ծննդյանը նախորդում է պահք, որը սկսվում է դեկտեմբերի 30-ին եւ ավարտվում հունվարի 5-ի երեկոյան՝ Ծրագալույցի Սուրբ Պատարագով:

Հոգեւորականները հորդորում են Ամանորը դիմավորել եկեղեցում եւ ստանալ Աստծո օրհնությունը՝ 67,36 մետր:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնը նշում է հունվարի 6-ին: Կաթոլիկ եկեղեցին այդ տոնը նշում է դեկտեմբերի 25-ին:

Մինչեւ 4-րդ դարը բոլոր քրիստոնյաները Սուրբ Ծնունդը նշել են հունվարի 6-ին: Սակայն անգամ քրիստոնեության ընդունումից հետո հռոմեացիները շարունակում էին հեթանոսական տոներ նշել: Բանն այն է, որ դեկտեմբերի 25-ին մեծ շուքով նշվում էր արեւի պաշտամունքին նվիրված տոնը: Հեթանոսական ավանդույթները խափանելու համար 336թ. Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը պաշտոնապես հռչակեց Հիսուս Քրիստոսի Ծննդյան օր: Հետագայում



Ասորիքում եւ գրեթե ողջ արեւելքում Քրիստոսի Ծննդյան տոնի օրը փոխադրվեց դեկտեմբերի 25-ին, իսկ հունվարի 6-ը մնաց՝ որպես Տիրոջ Աստվածհայտնության Սկրտության օր:

Հնագույն ավանդության եւ ավետարանական հաշվարկների հավատարիմ է մնացել միայն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հունվարի 6-ին միասնաբար նշելով Քրիստոսի Ծննդյան եւ Աստվածհայտնության տոները:

\* \* \*

\* Հասարակության շրջանում կատարված հարցման արդյունքների համաձայն՝ մարդկանց 50.1 տոկոսը տոնածառը համարում է Ամանորի պարտադիր հատկանիշ: Դրա առկայությունը նշանակություն չունի քաղաքացիների 27 տոկոսի համար: 21.4 տոկոսը գտնում է, որ տոնածառը նոր տարվա տոնակատարության պարտադիր պայման չէ, բայց, այսուհանդերձ, նախընտրում է արհեստական տոնածառը: Իսկ ահա հարցման մասնակիցների 1.5 տոկոսը դժվարացել է պատասխան տալ...



\* Ամենամեծ տոնածառը (ըստ Գինեսի ռեկորդների գրքի) տեղադրվել է Վաշինգտոնում: Բարձրությունը՝ 67,36 մետր:

\* Աշխարհի ամենամեծ արհեստական տոնածառը դրվել է Ռիո դե Ժանեյրոյում: 85 մետր բարձրությամբ մետաղե կառուցվածքը սարքավորվել է հատուկ լողացող հիմքի վրա, Լագոա լճի կենտրոնում (քաղաքի ամենահարուստ շրջաններից մեկում): Վիթխարի տոնածառի լուսավորման համար օգտագործվել է ավելի քան երեք միլիոն լամպ: Տոնածառի տեղադրման ամբողջ աշխատանքը տեւել է մեկուկես ամիս:

\* Տոնածառերն սկզբում երեւացել են հարուստ մարդկանց՝ ազնվականների, վաճառականների տներում: Դրանք ամենուր տեղադրելու սովորույթն առաջացել է մոտ 150 տարի առաջ: Մշտական, շքեղատես գեղեցկուհիները կանոնավորապես տեղ էին գտնում Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Նորվեգիայի, Դանիայի, Ռուսաստանի արքայական պալատներում: Իսկ ահա «հասարակ մահկանացուներին» տոնածառը հասանելի եղավ միայն 19-րդ դարի երկրորդ կեսում:



### Ռափայել ՊԱՏԿԱՆՅԱՆ Նոր տարի


Երնեկ թե՛ այս Նոր տարին  
Վերջ տար հայի ցավերուն  
Չարը կորչեր, ու բարին  
Բուն դներ մեր սրտերուն:

Երնեկ՝ թե այս Նոր տարին  
Ազատ շնչեր Հայաստան,  
Եվ շուրջ Մասիս մեր սարին  
Փայլեին արտ-անդաստան:

Երնեկ՝ թե այս Նոր տարին  
Ոտքի կանգներ Հայաստան,  
Եվ կիսաքանդ մեր Կարին  
Լիներ քաղաք մեր ոստան:


Երնեկ թե՛ այս Նոր տարին  
Հայ ազգ ի մի գունարվեր,  
Ի գլուխ Կարնո հայ ամրին  
Հայի դրոշակ ծածաներ:

Հայեր, երբեք չերկմտիք,  
Կկատարվի այդ ամեն,  
Եթե իսպառ մենք հանենք  
Փոքրոգություն մեր սրտեն:



### Համո ՍԱՀՅԱՆ Եղեկին

Անտառից եկած կանաչ եղեկին,  
Հիշում է կանաչ իր ընկերներին,  
Արահետներն է հիշում ծյունի տակ,  
Հիշում է բացատն ու բուքն սպիտակ:  
Երկինքն է հիշում իր գլխի վերե,  
Եվ իր մայր անտառն ասեղնատերե,  
Հովերն է հիշում նա գարնանային,  
Որ իրեն այնպես օրորում էին:  
Վաղորդյան ցողի գոհարն է հիշում,  
Եվ մայրամուտի թեւերն արբեշում,  
Հիշում է տոսափն ամեն մի ծառի,  
Խարույկն է հիշում անտառապահի:  
Հիշում է բոլորն ու չի ափսոսում,  
Որ էլ անտառի երգը չի լսում,  
Ինչո՞ւ ափսոսա, երբ իր թեւերին  
Գարուն է բերել երեխաներին,  
Գարուն է բերել այս ծնունդ օրով  
Եվ տուն է մտել կանաչ շորերով:  
Ե՞րբ է նա այսպես զուգվել, զարդարվել  
Եվ մարդկանց այսքան հրճվանք պատճառել,  
Ե՞րբ է նա եղել այսքան երջանիկ  
Ու ե՞րբ է տեսել այսքան խաղալիք:  
Ե՞րբ են նրա մոտ այսքան մանուկներ  
Երգել ու պարել մինչև ուշ գիշեր...  
Ձարդարանքներով, աստղերով իր պերճ  
Կանգնել է ուրախ մանուկների մեջ,  
Այնպես հպարտ է նայում աշխարհին,  
Կարծես հենց ինքն է բերել Նոր տարին:



### Ավետիք Իսահակյան Նոր տարու գիշերը

Գիշերվա կեսին զանգակատունից  
Հնչեց նոր տարվա ժամը ցնձալից:  
Անցավ հին տարին, անցել է ինչպես  
Մի հավերժություն մինչև այս րոպես,  
Մի հավերժություն անհուն, անսահման,  
Որ չքացել է ոչընչի նըման:

Եվ բեռնավորված հույսով ու վախով՝  
Մեռավ հին տարին իր հետ թողելով  
Ապարանքները իմ երազանքի,  
Որ շինել էի միշտ ժամանակի  
Քանդվող ծովափին...

Եվ ի՞նչ կա այսօր,  
Կանգնել եմ մենակ եւ ուղեմուրդ՝  
Ու միտք եմ անում-չքացավ անդարձ  
Հրճվանքը կյանքիս, եւ՝ վիշտը մնաց  
Սրտիս հատակում, ինչպես սեւ մըրուր...

Կանգնել եմ հիմա անհույս եւ թափուր՝  
Աչքերըս սուգած խավար անհայտում  
Գալիք օրերի,-ականց եմ դընում  
Ձանգակատունից խորին գիշերին  
Նոր տարվա ժամի հընչող զարկերին,  
Որ ինչպես սրի հարվածներ բեկ-բեկ  
Կտրում են կյանքիս թելերը մեկ-մեկ...



### Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ Նոր տարի

Դու էլ արի,  
Նորեկ տարի,  
Գըլխիս վերից  
Անցի, գընա,  
Ինչպես մի օր  
Թեթևասահ,  
Որ արեւի  
Վառ ժղպիտով,  
Հողմ ու շանթի  
Սառն աղմուկով  
Անց է կենում  
Ծաղկի վըրից.  
Իսկ նա հովտում,  
Իր հուսալից  
Աչքը վերե,  
Փոքրիկ, չընչին,  
Ցնծում է կամ  
Մոտ է վերջին:-  
Ես էլ էնպես,  
Նորեկ տարի,-  
Մի խոտ, մի բույս,  
Ոչ ավելի:

Մի երկիր է  
Տվել մեզ կյանք,  
Մի երկինք է  
Պահել իր տակ,  
Եվ գեղեցիկ,  
Փարթամ, հրպարտ  
Մի խոտ, ծաղիկ,  
Կամ թե մի մարդ...  
Մենակ իրար  
Չենք հասկանում,  
Բայց ապրում ենք  
Մի սահմանում,  
Մի ճամփով էլ  
Պիտի գընանք,  
Կըրկին ծուլվենք  
Մի հող դառնանք,  
Անհետ, անտես  
Կորչենք, ինչպես  
Չոկ հընչյուններ  
Մի մեծ երգի,-  
Լոկ հյուլեներ  
Տիեզերքի:



### Հայրապետ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Նոր տարվա նվերը

- Ա՛յ Նոր Տարի,  
Գա՛լք բարի,  
Դու մեզ նվեր  
Ի՞նչ ես բերել.

Ես ձեզ համար  
Մի-մի հարմար  
Գիրք եմ բերել,  
Մեջը պատկեր:

Քաղցր խնձո՞ր,  
Չիր ու սալո՞ր,  
Թե՞ տանձ ու նուռ,  
Չամիչ մի բուռ:

Սրա նման  
Ուրիշ մի բան  
Էլ չգտա  
Իբրեւ ընծա:

- Ջա՛ն, մանուկնե՛ր,  
Թող ձեզ մրգեր  
Մայրիկը տա,  
Ինձ մոտ չկա:

Գիրքն է տալիս  
Մտքեր բարի,  
Երգ, ցնծություն,  
Խաղեր սիրուն:

### ՄԵՏԱՔՍԵ

### Նոր տարվա գիշեր

Թե աշխարհում փակ դռներ կան, թող որ բացվե՛ն այս գիշեր,  
Ու Նոր տարին նոր խնդությամբ, թող ներս մտնի այս գիշեր,  
Թե կան դատարկ, համր տներ՝ մանկան ճիշով թող լցվեն,  
Ով փնտրում է սրտանց մեկին՝ հանկարծ գտնի այս գիշեր:

Թե կան լացող, տխուր աչքեր, թող ծիծաղե՛ն այս գիշեր,  
Կանչող ձեռքերն իրար հասնեն, հրաշք ապրեն այս գիշեր:  
Թե կան սրտեր՝ չար նախանձով, դառնան բարի ու ներող,  
Եվ ուրիշի ուրախ կյանքով խանդավառվեն այս գիշեր:

Թե մոլորված անցորդներ կան, դարձի թող գան այս գիշեր,  
Սրբագործված սիրով մտնեն իրենց օջախն այս գիշեր,  
Թե կան բախտի փշոտ ճամփեք, թող ծաղկունքով կանաչեն  
Ու երջանիկ սպասումով բոլորն արբեն այս գիշեր...

Թե աշխարհում պանդուխտներ կան, թող տուն դառնան այս գիշեր,  
Հայրենական հավերժությամբ ողջագուրվեն այս գիշեր,  
Արարչագործ ինձ ժողովուրդ, թող որ խնենք մինչև լույս  
Թափվող ծյունի նման մաքուր խղճիդ կենա՛ցն այս գիշեր...



# Ամանորյա խոհեր ու մաղթանքներ

## Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ



**«Հիշատակարան»-ից**  
 Ժամը 12-ին հնչեց 12 ժամը: Հին տարին գնաց, մեռավ անհունի մեջ: Նորը սկսվեց:  
 Լուսամուտը բացել, նայում են: Լուսնյակ գիշեր, լիալուսին, թեթև, կապույտ ամպեր: Լսում են, գնացքը զնուն է՝ սուլելով... Հանկարծ նավերի շշակները սուլում են, սուլում են, սուլում են... Հրացաններ են արծակում, անթիվ... Հեռվից մարդկանց ձայներ, երգեր, ծիծաղներ...

15 վայրկյան...  
 Պառկել վերհիշում են բոլոր նոր տարիները, որ դիմավորել են. ի՞նչ կերպ, ի՞նչ սրտով, ո՞ր, ինչպե՞ս...  
 Սուլում են նավերը, մեկը կտրում, մյուսը սկսում...  
 Մարդկությունը ուրախանում է. ինչի՞ համար, ի՞նչ հույսեր է սպասում, երբ ծոցի հինգ դիմում է անծանոթին... մահին, վերջին, ասպագային, որի ծոցում ով գիտե ի՞նչ դաշույններ կան... Գուցե մեզնից ոմանք չեն հասնելու մյուս տարուն, եւ շատերս չենք հասնելու, անշուշտ, բայց ուրախանում ենք...  
 Ի՞նչ բնագոյ է...

1926թ. դեկտեմբերի 31, Վենետիկ

### 1956 թվականի տարեմուտի գիշերը երեսնի ռադիոն Սփյուռք հասցրեց Վարպետի մաղթանքը:

- Սփյուռքի սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,  
 Այս՝ 1956 թվականն անցավ համաշխարհային խաղաղության մթնոլորտի մեջ: Բերկրալի է նկատել, որ միջազգային լարվածությունը բավականին թուլացավ, եւ քաղցր է հուսալ, որ այս Նոր տարին եւ հաջորդ տարիները կանցնեն խաղաղության մեջ, եւ ավելի կթուլանա լարվածությունը:

Հայ ժողովրդին անհրաժեշտորեն հարկավոր է խաղաղություն: Միայն այդ պայմաններում նա կարող է բուժել պատերազմներից ստացած ծանր վերքերը:

Խաղաղությունը հայ ժողովրդի բարեկամն է: Այս Նոր տարվա շեմքին հոգեկան քաղցր համոզյք են գզում՝ ողջունելու ձեզ բոլորիդ եւ բարեմաղթանքներ անելու:

Ցանկանում են ձեզ բոլորիդ առողջություն, հաջողություն, սեր միմյանց հանդեպ: աշխատեցեք եւ մի՛ հուսահատվեք: Սիրեցե՛ք հայրենիքը, մայրենի լեզուն, մայրենի գրականությունը:

Բարձր պահեցե՛ք ազգային արժանապատվությունը: Անաղարտ պահեցե՛ք ազգային լավագույն ավանդները:

Թող ապրի եւ գորանա Սովետական Հայաստանը՝ մեր բոլորի սիրելի եւ պաշտելի հայրենիքը:

Հայտնում են իմ սրտագին շնորհակալությունը այն բոլոր հայրենակիցներիս, որոնք հեռավոր վայրերից հայրենիքի կարոտի զգացումներով շնորհավորեցին իմ 80-ամյակը:

Սրտիս բոլոր ջերմությամբ շնորհավորում են ձեր բոլորի Նոր տարին, իմ սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ:

(Կլարա Թերզյան, «Բույլ մեծաց», Երևան, 2001)

## Երվանդ ԲՈՉԱՐ



### 1966 թ., դեկտեմբեր

Մեր դարում, մեր օրերում մաղթանքներ անելը շատ դժուր է բան է, քանի որ մարդանց սրտերում մի իղձ եւ ցանկություն կա, եթե միլիոնավոր հայերին խնդրեց իրենց սրտի մաղթանքն անեն 1967 թվականին, բոլորը միաձայն եւ ներդաշնակ կբացակայեցին «Թող 1967 թիվը լինի խաղաղության տարի, թող կորչի մեր երկրից պատերազմը»: Այո՛, չարը կորչի եւ բարին բուն դնի ոչ միայն մեր սրտերում, այլ բոլոր մարդկության սրտերում, աշխարհից վերանան թշնամությունը, ատելությունը եւ պատերազմը:

Մեզ՝ հայերիս համար միակ ցանկալին եւ երանելին՝ խաղաղությունն է: Մենք փոքրաթիվ, փոքր ազգ ենք, մեր գոյության իմաստ ու առավելությունը՝ մեր տաղանդն է, որը իրավունք է տալիս մեզ մեծ՝ բազմամիլիոն ազգերի շարքում կանգնել եւ ապրել այս արեւի տակ: Դրա համար մաղթում են, որ 1967 թվականը լինի հայ ժողովրդի համար առավել բեղմնավոր եւ ստեղծագործ տարի: Թող շատանան տաղանդավոր եւ ձեռներեց հայերը բոլոր ասպարեզներում, եւ հայ անունը լինի դրոշակ ազգերի հառաջդիմության, արվեստի եւ գիտության բոլոր բնագավառներում:

(Նույն տեղում)

## Համո ՍԱՀՅԱՆ

### 1988թ. դեկտեմբերի 31

Նոր տարի է գալիս: Ուզում եմ շնորհավորանքի խոսքեր գտնել իմ տոհմ ու տակի ավագների եւ կրտսերների համար, իմ ազգի բոլոր մեծերի ու փոքրերի համար:

Ուզում եմ հետ նայել, հետ զննալ, վերապրել անցածը, մեկ տարվա անցածը: Ուզում եմ շնորհակալության ու շնորհավորանքի խոսքեր գտնել իմ ժողովրդի փետրվարյան խիստ ու խելոք ընդվզումների համար, դարավոր ստրկության վախից ձեռքազատվելու նրա աստեղային ժամի համար, ազգային զարթոնքի, միահամուռ կամքի, միասնության եւ միաբանության նրա աստեղային ժամի համար, իր ինքնաճանաչման գիտակցությունը դարի ճակատին արձանագրելու համար, իր երդաշեն վաստակի եւ երդան-


վեր ոգու համար, կորցրածը ետ բերելու իր առաջին հանդուգն փորձի համար:

Մենք տոկալու եւ ապրելու ենք, քանի աշխարհը կա, քանի աշխարհում մարդկություն կա եւ մարդկության մեջ՝ մարդկայնություն:

Այս հավատով էլ ոտք դնենք Նոր տարվա շեմին եւ բոլոր սրտով բոլորին մաղթենք՝ շնորհավոր Նոր տարի:

### 1989թ. դեկտեմբերի 31

Նոր տարի է գալիս: Դառնանք ու մաղթենք, որ այս տարին իրենց տուն ու տեղից բռնված հայերի համար գաղթականության վերջին տարին լինի, որ նրանք իրենց հող դարձած պապերի հողի վրա տիրաբար քայլեն, ծաղկեցնեն այդ հողը եւ ապահովեն իրենց սերունդների ծաղկումը: Նոր տարի է բացվում, բարով է բացվում ու բացվում է բարի:



### 1992թ. դեկտեմբերի 30

Նոր տարի է գալիս: Ոչ մի օրհաս, ոչ մի հոգեվարք, ոչ մի կործանում, մենք մեր կայանում որպես ազգ ու պետություն, այդ կայանալու կենսացը մաղթենք:

(Ըստ համացանցի)

## Հրաչյա ԲՈՉԱՐ

### 1964 թ. դեկտեմբեր

1964 թվականը դարձավ անցյալ, ազգերն ու ժողովուրդները, պետություններն ու անհատները ներս մտան 1965 թվականի շեմից՝ բերելով իրենց հետ կիսատ մնացած գործերը լրացնելու, չիրականացած ծրագրերն իրագործելու ցանկություն, բերելով իրենց հետ երազանքներ, բաղձանքներ, հույսեր, կարոտներ:

Եվ մենք էլ՝ հայ ժողովուրդը, հայրենիքում ապրողներս ու աշխարհի բոլոր ծագերում հեզերողները, ողջ մարդկության հետ միասին մի քայլով առաջ գնացինք դեպի ապագան: Շնորհավորենք միմյանց Նոր տարին, եղբայրներ, որ գատվել էինք իրարից տասնամյակներ առաջ եւ երազում ենք միանալ, գտնել կորցրածը, հարգելով նահատակների հիշատակը՝ միաթարվել նորերի ծնունդով, ստեղծել նոր հոգեւոր արժեքներ, կառուցել նոր հավատի տաճարներ:

Քառասունչորս տարի է, որ մեծ ողբերգությունից հետո, հայ ժողովուրդը հայրենիք ունի, նորոգում է դարերի իր հուշարձանները, կանգնեցնում է նոր կոթողներ, մշակում եւ փայլեցնում է իր լեզուն՝ բացելով գրաբարի եւ մեր հարուստ գավառաբարբառների գանձերը, դաշնակում է նոր երգեր, մտքով սլանում է տիեզերքի հեռավոր գաղտնարանները եւ իջնում է երկրի ընդերքը, որ անսահման հարստություններ է պահում իր խորքում: Հայ անունն օտարներն արդեն արտասանում են հարգանքով ու ջերմ համակրությամբ, Հայաստանն այլևս աշխարհագրական հասկացություն չէ, այլ կենդանի իրականություն, ինքնատիպ իր բնապատկերներով եւ ժողովրդի ազգային ինքնատիպ ստեղծագործական երեսակայության սլացքներով:

Հայաստանն ու հայ ժողովուրդն այլևս չեն դողում պատմության ցրտաշունչ հողներից, չեն երկնչում վտանգավոր անակնկալներից, որովհետեւ մենակ չեն, անզեն չեն, անպաշտպան չեն: Հայաստանն ու հայ ժողովուրդը կարեկցություն չեն հայցում այսօր ուրիշներից: Իր արժանիքները ճանաչող եւ իր արժանա-

պատվությունը բարձր պահող հայ ժողովուրդն այսօր ամեն հզոր ճանաչված երկրի հետ կարող է խոսել ինչպես հավասարը հավասարի եւ ամեն զարգացած ժողովրդի մշակույթի կողքին կարող է դնել իր նոր ստեղծագործությունները՝ առանց երկյուղի, ինքնավստահ:

Սակայն պատմական այս մեծ ձեռքբերումները երբեք պատճառ չեն եղել, որ մենք գոհանանք եղածով, եւ թուլանա մեր մեջ ստեղծագործական ավյունը, պաղի ներշնչանքը, մարմնի մեր հոգու կրակը: Ամեն նոր բարձունքի հասնելիս մարդ նոր հորիզոններ է տեսնում, նոր հեռուներ են գրավում նրան, նոր կախարհական կանաչ հովիտներ են կանչում նրան:


Ժողովուրդն էլ այդպիսի ճանապարհորդ է պատմության դեռ չհետազոտված տարածություններով:

Ամխոնջ ճանապարհորդ է եղել հայ ժողովուրդը: Նրա քարավանն անցել է խորխորատներով, վտանգավոր կիրճերով, ու ամեհի անդունդներով, միշտ ենթակա ավազակախմբերի հարձակման, ենթակա ավարի ու կողոպուտի, ենթակա խոշտանգումների ու մահվան վտանգի: Թանկագին գանձերով բեռնված քարավանով մենք անցանք ահավոր փորձանքներից, կորցնելով շատ թանկագին կյանքեր ու զանձեր, բայց հասանք լուսավոր տարածությունների եւ գորեղացանք վերստին՝ մեծ կյանքով ապրելու համար: Հազար ինը հարյուր տասնհինգից հասանք հազար ինը հարյուր վաթսուհինգին:

Դա հերոսական, դյուցազնական ճանապարհ է:

Շնորհավորում են ձեզ, իմ հեռավոր եղբայրներ, այս նոր հանգրվանի, այս նոր բարձունքի վրա:  
 Ետ եւ նայում անցած ճանապարհին՝ հոգիդ սոսկում է պատում եւ միաժամանակ համակվում է ցնծությամբ: Մահվան ու վերածնության հիսունամյակ ապրեցինք:  
 Առջեւ եւ նայում՝ տեսնում ես գալիքը՝ պայծառ, գեղեցիկ, լի հույսերով ու շքեղ երազանքերով, որոնց իրականացմանը լիովին հավատում է դժբախտություններ եւ շատ երջանկություններ տեսած հոգիդ:

Ասում են՝ 1965-ը պիտի ազգային սուգի տարի լինի, որովհետեւ ժողովուրդը նշում է իր ազգային



ողբերգության՝ Մեծ եղեռնի հիսունամյակը: Միտոս չի համաձայնում դրան: Կնչենք եղեռնի հիսունամյակը, հուշարձան կկառուցենք մեր մեծ մայրաքաղաքում եւ մեր հոգիների մեջ՝ նահատակների հիշատակին, ամբողջ աշխարհով մեկ կդատապարտենք դահիճներին եւ կխոսենք աշխարհով մեկ ցրված, իրենց հայրենիքը կորցրած հայ զանգվածների արդար իրավունքների մասին: Բայց 1965-ը սգի տարի չի լինի մեզ համար, այլ նոր մաքառումների, նոր հաղթանակների, միաբանության եւ ազգային ցրված ուժերը համախմբելու, հայրենիքի եւ հայ սփյուռքի փոխադարձ ճանաչողությունն առավել զորեղացնելու, հարաբերություններն առավել ջերմացնելու տարի: 1965-ին ավելի պիտի հավատանք մեր ազգային, մեր հոգեւոր ուժերին, մեր ժողովրդի ոգուն, նրա կենսունակությանը, նրա ազգային երազանքների իրականացմանը:

Հայրենիքի սիրո ջերմ զգացումներով լի՝ ողջունում են ձեր Նոր տարին, Մերձավոր Արեւելքի եւ Աֆրիկայի երկրներում, եվրոպայի եւ երկու Ամերիկաների մեծ քաղաքներում, Իրանում եւ Թուրքիայում, աշխարհի բոլոր ծագերում, բոլոր հորիզոնների տակ ապրող մոտիկ ու հեռավոր եղբայրներ: Մի՛ ընկճվեք, դուք հայրենիք ունեք, որի վրա ոչ մի մութ ամպ չի որոտա այլևս:

Մեր ժողովրդի մեծ ապագայի համոզեալ խորը հավատով՝ շնորհավորում են ձեր Նոր տարին:

(Կլարա Թերզյան, «Բույլ մեծաց», Երևան, 2001)



# Ամանորյա խոհեր ու մաղթանքներ

## Պարույր ՍԵՎԱԿ


**1963 թ. դեկտեմբերի 31-ին սփյուռքահայության համար եթեր է հեռարձակել մեծանուն բանաստեղծի շնորհավորանքի խոսքը.**

Սիրելի՛ ազգակիցներ, Երկրագնդի բոլոր միջօրեականներն ու հորիզոնականները անհայրենիք հայի ոտքերով հատած հեռավոր հարազատներ:

Գալիս է Նոր տարին, Կաղանդը, Ամանորը:

Գալիս է ու մեզ համար, որ ժողովուրդ ենք, բայց ժողովված չենք: Ուրեմն թող նա գա նախ եւ առաջ իբրեւ մեքքապնդող գոտի բոլորիդ համար՝ աշխարհագրական որ գոտիներում էլ լինենք:

Եթե համբերությունը թել է, մերը պիտի պարան կոչվի եւ հյուսված լինի ոչ թե թելերից, այլ ջղերից մեր սեփական, մեր մկաններից ու նյարդերից:



Թող Նոր տարին նորոգի ձեր ջղերը, ամրապնդի ձեր մկանները, երիտասարդացնի ձեր նյարդերը: Աչքերը տեսնելու համար են եւ ոչ թե միայն ճանապարհ պահելու: Բոլորիս աչքերն էլ ճանապարհ են պահում. մենք՝ ձեր ճանապարհը, դուք՝ մեր ու ձեր հայրենիքի:

Թող բոլորիս աչքերն էլ պայծառանա Նոր տարում, եւ ճանապարհները կրճատվեն, եւ սպասելիքները մոտենան:

Բարին է առաջնորդել մեզ հազարամյակներ շարունակ: Մեր տվածի գեթ մի մասը պիտի որ մեզ վերադարձնի բախտ կոչվածը, որքան էլ հուլաբար ու ծուլաբար քայլի:


Թող գալիք տարին արագացնի այդ քայլը, ու բարին հասնի բոլորիդ ու բոլորիս: Թող հայ մանուկներ շատ ծնվեն Նոր տարում եւ ծնվեն ճակատի այլ գրով. կնունքը՝ որտեղ կուզի, բայց նրանց հարսանյաց հանդեսը կատարվի մեր Մայր Չայրենիքում, ստորոտներում այն լեռների, ափունքներում այն լճերի ու գետերի, որոնց անունն արտասանելիս դողում են մեր շուրթերը եւ փշաբաղվում է մեր մաշկը...

## Մարտիրոս ՍԱՐՅԱԼ

**1966թ., հունվարի 1**

Ամեն նոր տարի, շատ նոր բարիքների հետ միասին, նոր խոսք է բերում, բայց ուժի մեջ թողնում մեր նախնիների ստեղծած դարերի փորձով ու սերունդների իմաստությամբ ստուգված խոսքերը: Հայ մարդը միշտ Նոր տարին դիմավորելիս գինու բաժակը առել է ձեռքը, շնջացել է՝ խաղաղություն աշխարհին: Աշխարհում խաղաղությունը երեւի ամենից շատ հայ ժողովրդին է պետք եկել: Դարեր շարունակ Արեւելքի ու Արեւմուտքի բախման քառուղիներում ընկած Հայաստանն ասպատակվել է, ավերվել, բաժանվել հզորների միջեւ, բայց, երբ հայ ժողովուրդը խաղաղության կարճատե պահեր է ունեցել, ստեղծագործել է, կերտել արվեստի հրաշքեր, մարդակային մշակույթն ու քաղաքակրթությունը հարստացրել յուր հոգու գեղեցկություններով: Նա աշխարհին խորեմացի ու Շիրակացի է տվել, Չվարթնոց ու Աղթամար է կերտել, բաժրացրել միջնադարի փառքերից մեկը՝ Անի մայրաքաղաքը, որն իրավունքով տիեզերական քաղաք է կոչվել: Այդպես է եղել դարերի ընթացքում, այդպես եղավ նաեւ մեր դարում, երբ հայ ժողովուրդն իրեն վիճակված մեծագույն ողբերգությունից հետո, բզկտված ու արյունածոր, նորից ոտքի ելավ, հավատարիմ իր նախնիների ավանդին, սկսեց նոր քարեր դնել իր մշակույթի հին շենքին, զարգացնել իր գիտությունը, գրականությունը, արվեստը:

Խաղաղություն աշխարհին եւ աշխարհի հետ՝ Հայաստանին, որ հայ ժողովրդի ընդերքում եղած ստեղծագործական հորդառատ ուժերը նոր հրաշքեր գործեն, որ էլ առավել ծաղկի Հայաստանը, իր գրկում հավաքի աշխարհով մեկ ցրված իր տարագիր գավակներին, որ հավետ հնչի քաղցր ու սրտաբուխ հայոց լեզուն:



## Դերենիկ ԴԵՄԻՐՃՅԱԼ

**Նոր տարվա խոհեր (հատվածներ), 1956 թ., հունվարի 1**

Հին տարին արդեն պատկանում է անցյալին: Լավում են նոր տարվա ոտնածայները: Գալիս է: Ահա իրար կհանդիպեն հին ու նորը, որ հրաժեշտ տան իրար:

Չգիտես ո՞ր կողմը, որի՞ն մայես: Նայում ես գնացողին եւ ժպտում: Այդ ժպտի մեջ կա եւ երախտագիտություն, եւ քննադատական մտքեր, եւ ափսոսանք, եւ ներողամտություն: Նայում ես նրա կռացած մեջքին, տեսնում ես նրա խոհուն հայացքը եւ հակադրում ես նրան:

Նա խրատվել է, իմաստացել: Նա գիտե, թե ինչ է արել եւ ինչ է թողել պակաս: Կուզեր լրացնել, շտկել, այդ էլ անել:

Բայց... արդեն ուշ է: Անցածն անցել է: Պետք է գնալ:

Եվ մարդկային է. նոր իղծերով, նոր հույսերով, վատահ, ուրախ դիմավորում ենք նոր տարում եւ նրանից սպասում, որ նա անի, ինչ չի արվել, ինչ թողնվել է կիսատ, ինչ պատրաստվում ենք լրացնել, իրագործել:

Եվ շատ բան ենք պատրաստվում անել, եւ լավ անել, փորձերից խրատված անել:

Կանենք, հույս ունենք, վստահ ենք, որ կանենք:

Բայց... Մարդկային է միշտ մնալ դժգոհ, միշտ կարծել քիչ, թեկուզ եւ շատ բան արած-կատարած ենք լինում:

Իհարկե, երբեմն եւ իրոք քիչ ենք անում, երբեմն էլ չենք անում: Բայց...

Մարդկային է, ցանկանում ենք, որ անենք, կատարենք էլ ավելին:


Ուրեմն ի՞նչ, որքա՞ն պետք է անենք, կատարենք, որ ասենք, բավական է: Ե՞րբ կատարենք:

Երբեք: Ո՛չ մի դեպքում: Պահանջն էլ զնալով մեծանում է:

Էլ ավելի են պահանջում մեր տեսակարար կշիռը մեծացնող պետությունը, մեր ծավալվող էպոխան, մեր խորացնող կյանքը:

Ուրեմն եւ միշտ, հավիտյան պետք է մնա այս հիմնական, անհանգիստ դեպի գործունեության կոչող այս դժգոհ պատանջը: Էլ ավելի, էլ ավելի ավելի: Պարագո՞քս է սա: Ո՛չ: Սա է շարժում կյանքը առաջ:

Բարդ է կյանքը, սիրելի՛ ընթերցող, եւ մենք ամեն անգամ չէ, որ ընթերցում ենք նրա էությունը: Դեպի ծովն ընթա-



ցող գետի պես այն մերթ աղմկում է սահանքներում, մերթ որոտում ջրվեժներում, մերթ հոսում է հուշիկ, հանդարտ, մերթ էլ չգիտես ե՞տ է գնում, թե՞ առաջ... Չխաբվես երբեք, սիրելի՛ ընթերցող:

Ոչ մի վայրկյան ետ չի գնում եւ ամեն վայրկյան առաջ է գնում, ինչպես ժամանակը:

Միայն առաջ: Միայն առաջ:

Մենք երբեք չենք սխալվի, եթե ունենանք պատմական հեռանկար: Որովհետեւ մենք միշտ պատմության մեջ ենք, ուրեմն եւ պատմություն ենք ստեղծում, ուրեմն եւ շարժվում ենք առաջ: Դեռ մեր այսօրվա մտայնության եւ գործունեության մեջ կամ անցյալ հետքերը: Իսկ հեռավոր ապագայի՞ն... Ուրեմն պետք է ունենանք պատմական հեռանկար եւ տրամադիր լինենք այսօր չլինելու ինչպես երեկ էինք եւ ապագայում ինչպես այսօր ենք: - Միայն պահանջ, միայն պարտականություն, միայն ստիպանք. - կասի ինձ մի ուրիշ ընթերցող...

Այո՛, եթե պահանջ կա, պարտականություն կա, ստիպանք՝ մենք պիտի կանգնենք դրանց առաջ:

Պայքար, աշխատանք, -ահա բնության էությունը, նրա հատկությունը, նրա դրողունը:

Մեր գործերը կմնան չկատարված, եթե ձեռներս ծալած սպասենք, որ դրանք իրենք իրենք կատարվեն:

Մենք ամեն ռոպե պետք է հիշենք, որ աշխարհն ինքն իրեն չի կառուցվում, այլ կառուցում ենք մենք:

Իրականությունը դառնում է մեր թշնամին, եթե մենք չենք փոխի այն, ինչպես կամենում ենք:

Բնությունը մեր եղբայրը չէ: Եթե պառկենք Սահարա անապատի մեջ եւ սպասենք նրա գթությանը, կոչնչանանք:

Բնությանը մենք պիտի ստիպենք, որ նա լինի «բարի» դեպի մեզ: Մենք պետք է օգտագործենք մեր

ամբողջ կամքը, ուժը, միջոցները, մեր «ներքին ռեսուրսները» եւ աշխարհը փոխենք:

Ահա ինչու ես չեմ կամենում իմ ընթերցողներին այս հանդիսավոր տարեմուտին՝ նոր տարին շնորհավորել հին ոճի բարեմադրությամբ:

Հին ոճով ես կասեի՝ շնորհավոր նոր տարի, ցանկանում եմ, որ նա ձեռք բերի նոր բարի: Անցյալում սպասում էին, որ նոր տարին ինքը բերի:

Եվ ոչինչ չէինք անում, մտտում, սպասում էինք, որ նա բերի այդ բարին: Նա էլ չէր բերում իհարկե:

- Ափսո՛ս, չբերե՛ց: Եհ, ճարներս ինչ, սպասենք մյուս տարի:

Եվ այդ ամենը այն ժամանակ, երբ բոլոր բարիքները բերողները մենք պիտի լինենք, մեր բախտը կերտողները՝ մենք, մեր իղծերի կատարողը՝ մենք:

Եկեք չսպասենք ոչ ոքից, ոչնչից մեր բարիքը, մեր իղծերի կատարումը, բացի մեզանից:

Իսկապես, ի՞նչ են հին տարին, նոր տարին:

Չկա հին տարին, այդ արծաթափեր կորամեջք ծերունին:

Չկա նոր տարին, այդ առույգ, ուրախ երեխան:

Դրանք մեր պատկերացումներն են, մեր այլաբանությունը, մեր երեւակայությունը:

Մենք ենք հնարել ժամանակի չափերը:

Մենք ենք շինում ժամացույցները: Մենք ենք չափողը, չափում ենք մեր շարժումները, քայլերը, վարմունքները, գործերը:

Մենք մեզ ենք չափում: Մենք ենք հին տարին, մենք ենք նոր տարին:

Մեր ձեռքն է մեր բախտը, մեր կյանքի տնօրինությունը, մեր իրականության ստեղծողները, մեր կյանքը փոխողները:

Ձանաք էլ ավելի լավ, էլ ավելի շատ, էլ ավելի գեղեցիկ փոխել, կառուցել մեր կյանքը, այնպես, ինչպես երագուն ենք, կամենում ենք, ձեռնարկում ենք:

Եվ կանենք այնպես, որ բարձրանա մեր տնտեսությունը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը:

Կբարձրացնենք էլ ավելի մեծ աստիճանների մեր սիրելի Հայրենիքը, մենք ենք կամենում, կառուցում փոխում, տնօրինում, հրաշակերտում:

Ահա այս մտքով ասենք. շնորհավոր մեր Հայրենիքի տոնական օրը: Ասենք բարյավ՛ գնաս հի՛ն, արդյունավոր՛, երախտավոր՛ տարի

Բարով գա՛ւ նո՛ր, էլ ավելի արդյունավոր՛, երախտավոր՛ տարի:

## Վահրամ ՓԱՓԱՉՅԱԼ

**Պահպանված է Վահրամ Փափաչյանի՝ 1966 թվականի Ամանորի խոսքը, որը ժամանակին մեծ արձագանքի արժանացրեց: Ուշադրություն դարձրեք, թե ինչ «մեծ տան» մասին է խոսում անվանի դերասանը: 1966 թվականին նա խոսում է մեր պապենական հողերի մասին, որ գերության մեջ են: Ի դեպ, նա առիթը բաց չէր թողնում, որ պատմեր Արեւմտյան Հայաստանի մասին: Նրա խոսքը պատկերավոր էր, ինքնատիպ եւ ժամանակակից հնչեղություն ունի. այո՛, մենք պետք է կառուցենք մեր «մեծ տունը»:**



Սիրելի եւ բանկազին մարդիկ: Ինձ խնդրել են շնորհավորական մի քանի խոսք ասել Նոր տարվա առթիվ: Եվ նախքան թե գրիչս ձեռքս առնեմ, հիշեցի մեր հինավուրց ասացվածքը, թե մեր տունը մեղ է, այո՛, բայց սրտներս է լայն: Եվ այդ լայն սրտի շնորհիվ է, որ ավելի քան հազարամյակներ ահա մեր ժողովուրդը ոչ միայն կարողացել է ապրել, այլեւ հակառակ անհուն առաջադեմների, իր տունն ապրելու համար մեղ անել, հյուրի համար տեղ անել՝ հավաքելով բոլոր ցայտուն հայերին, տուն բերել ու տունը մեծացնել: Այո, մեծացնել, որովհետեւ հայ ժողովուրդը շնորհիվ երկար ժամանակ մեղ ապրելակերպի, եղել է ու շինարար ժողովուրդ: Լցնենք ուրեմն մեր խոսքս ու անմարդաբնակ վայրերը շեն գյուղերով, հարուստ քաղաքներով, մի թիզ ազատ հող չթողնենք առանց կառուցման մեր Հայաստանի պայմաններում, որ իրավունք ունենանք մեծ տան մասին խոսելու: Եվ ես համում այդ երջանիկ օրվա լցնում եմ բաժակս լիքը մեր հողի ու արելի տված գինով ու խմում ձեր բոլորի կենացը՝ Հայաստանի աշխատող, խելացի եւ քաղցր ժողովրդի կենացը:

(Կլարա Թերզյան, «Բույլ մեծաց», Երևան, 2001)



# Տարեմուտն աշխարհում

Կուբայում տան բոլոր ամանները լցնում են ջրով, որը Ամանորի գիշերը թափում են փողոցում՝ դրանով իսկ ազատվելով բոլոր մեղքերից:

Բուլղարացիների համար Նոր տարվա ամեն լավ բանի խորհրդանիշը հոնենու ճյուղն է: Այդ իսկ պատճառով մարդիկ Ամանորին հենց այդ ճյուղերն են նվիրում միմյանց:

Չեխն են սլովակ երեխաներին իր նվերներով ուրախացնում է փայլուն ժպիտով եւ բարձր գլխարկով Մկուլաշը:

Չեմնարդ սկսել են պատրաստել XIX դարից՝ սկսած իր անփոփոխ մանրամասներով՝ դուլյով, ցախավելով եւ գազար-քթով:

Կա հավատալիք, ըստ որի՝ նախաամանորյա երազը (դեկտեմբերի 30-31) կանխատեսում է ապագա տարին:

Չինաստանում հատկապես սիրելի է վիշապը: Այն խորհրդանշում է բարեկեցություն, այդ իսկ պատճառով ընդունված է այն մարմնավորել թղթե վիշապների տեսքով: Բացի այդ՝ փողոցներում վառվում են հազարավոր լուսամուկուհիներ:

Էկվադորում ընդունված է թղթի վրա գրել նախորդ տարվա բոլոր անախորժությունները եւ այն

ղեկավարը Ամանորի գիշերը փողոցում տան պատին հարվածում է նույլ: Այս ու այն կողմ թռած նույն հատիկները հաջողության խորհրդանիշներ են:

Եղեմու առաջին ապակե խաղալիքները սկսել են արտադրել XIX դարի կեսին՝ Սկանդինավյան երկրում:

Մեքսիկացիներն ամանորյա նվերները գտնում են կոշիկների, իսկ իռլանդացիները եւ անգլիացիները՝ գուլպաների մեջ:

Հին Եգիպտոսում Նոր տարին սկսվում էր Նեղոսի վարարման օրը՝ ամռան սկզբին:

Ընդունված է Նոր տարին դիմավորել նոր հագուստով՝ ողջ եկող տարում նոր իրեր ունենալու համար:

Կուբայում Նոր տարին կոչվում է Թագավորների օր:

Եվրոպայում ամենամեծ քանակությամբ ամանորյա ծառերը վաճառվում են Դանիայում:

Ռումինական ամանորյա թխվածքների մեջ թաքցվում են բազում անակնկալներ: Մասնավորապես՝ մետաղադրամը համարվում է երջանկություն եկող տարում:

Ֆրանսիացիները, սովորաբար, նվիրում են հուշանվերներ եւ բացիկներ:



լանդիայի Ռովանիեմի քաղաքն է, որը գտնվում է բելեռային շրջանի մոտ:

Շոտլանդիայում Ամանորի գիշերը վառում են կուլարով լի տակառներ եւ գլորում փողոցներով՝ քշելով նախորդ տարին եւ կանչելով նորը:

Լեհաստանում տոնական սեղանին դնում են «paczki»՝ դոնդոլով փխրուն թխվածք:

Չմեռ պապին Ռուսաստանի կենսաթոշակային ֆոնդը շնորհել է «Չեքիաթային աշխատանքի վետերանի» կոչում:

Առաջին ամանորյա բացիկը տպագրվել է Լոնդոնում, 1843թ.:

Ըստ ավանդության՝ ամանորյա կոճղը Անգլիա են բերել վիկինգները: Նրանք Շվեդիայի օրվա առթիվ մեծ ծառ էին պատրաստում, որը տարվա վերջում այրում էին: Եթե ծառը երկար էր այրվում եւ ամբողջությամբ, դա խորհրդանշում էր հաջողություն:

Եղեմին ծննդյան եւ ամանորյա տոների քրիստոնեական խորհրդանիշներից մեկն է: Սակայն, պարզվում է, եղեմին ոչ միայն ուրախություն եւ տոն կարող է բերել: Գիտնականները պարզել են, որ եղեմինների վրա կան սնկեր, որոնք տնային պայմաններում արագորեն տարածվում են եւ մեծ քանակությամբ սնկասաղմ տարածում: Դրանք, իրենց հերթին, հազ են առաջացնում, ինչպես նաեւ հանգեցնում շնչառության վատացմանը: Դրանից խուսափելու համար պետք է տուն բերելուց առաջ լվանալ եղեմին, կամ էլ արհեստական ծառ օգտագործել:

Ենթադրվում է, որ եթե անցնող տարվա վերջին ժամվա ընթացքում թղթի վրա գրես ամենամիլիոնական ցանկությունդ, իսկ հետո՝ Նոր տարվա զանգերը խփելիս, այրես այն, կարող ես որոշել՝ կկատարվի այդ ցանկությունդ, թե ոչ: Եթե թուղթը ամբողջությամբ այրվի, քանի դեռ խփում են զանգերը, ապա երազանքդ անպայման կիրականանա:

Տիբեթում Նոր տարին նշելիս կարկանդակներ են թխում եւ բաժանում անցորդներին: Որքան շատ կարկանդակներ բաժանես, այնքան երջանիկ կլինես առաջիկա տարում:

Հնուն հրավառության ծայնի ուժգնությամբ էր պայմանավորված չար ոգիների դեմ պայքարի հաջողությունը:

Որի դե ժանեյրոյում տեղադրել են աշխարհի ամենամեծ լողացող տոնածառը, որի բարձրու-

թյունն 85 մետր է. այն զարդարում են մոտ 3 միլիոն լույսեր:

Ուղղափառները Սուրբ Ծննդից մինչեւ Հայտնությունը ընկած շրջանում Ջրօրհնեք են նշում: Այդ ժամանակահատվածը ոչ միայն քրիստոնեական ծեսերով, այլեւ հեթանոսական սովորույթներով է հարուստ:

Բրազիլիայում գլխավոր ուտեստներից է ոսպով ապուրը, որը խորհրդանշում է բարեկեցություն եւ հարստություն:

ԱՄՆ-ում Սպիտակ տան դիմաց առաջին անգամ 1895 թվականին են վառել առաջին էլեկտրական զարդաշղթան:

Ավստրիայում ամանորյա կերպարների կողքին ներկա է նաեւ «Թռչուն-Հաջողությունը», այդ իսկ պատճառով էլ տոնական սեղանին նրանք հավ չեն դնում:

Գերմանիայում Չմեռ պապը նվերները դնում է լուսամուտի գոգին, իսկ Շվեդիայում՝ վառարանի մոտ:



Նոր տարում քեզ հուզող հարցի պատասխանը կարող ես գտնել՝ տաք կաթային մեջ բրինձ նետելով: Եթե արդյունքում հստակ պատկեր է գծագրվում, նշանակում է՝ հարցդ դրական պատասխան է ստանում:

Գրեմլանդիայում եսկիմոսների շրջանում գոյություն ունի միմյանց սառույցից պատրաստված նվերներ տալու սովորույթ:

Հարավային Երկրներում, որտեղ ծյուն չի գալիս, մարդիկ այլ կերպարներ են մտածել, օրինակ՝ Կամբոջայում կա «Տաք պապ»:

Ֆրանսիայում տոնական սե-

ղանին մատուցում են հնդկահավ եւ պանիր:

Ֆինլանդիայի եւ Ռուսաստանի սահմանի վրա 2001-ին հանդիպել են Յոլպուկին եւ Չմեռ պապը:

Կա կարծիք, որ Նոր տարվա շեմին չպետք է փող տալ, հակառակ դեպքում՝ ամբողջ տարի պետք է պարտքերը վճարել:

Սկանդինավյան թերակղզում ամանորյա սեղանին դնում են բրնձե ապուր՝ մեկ նուշով: Ով գտնում է նուշը, նրան երջանկություն է սպասում ամբողջ առաջիկա տարում:

Անգլիայում ամանորյա զանգերի հնչելուն զուգահեռ՝ բացում են տան ետնադուռը, որպեսզի հին տարին հեռանա, իսկ վերջին զանգը դիմավորում են գլխավոր մուտքի մոտ՝ դիմավորելով Նոր տարին:

Ավստրալիայում Սանտա Կլաուսը ամանորյա շոգին հագնում է տոնական լողազգեստ եւ նստում ջրային մոտորանավակի վրա:

Հնուն ընդունված է եղել Չմեռ պապիկին տալ նվերներ՝ չակնկալելով նվերներ նրանից:

Իտալիայում առողջության, երկարակեցության եւ բարեկեցության խորհրդանիշներ են համարվում ոսպը, ընկույզը եւ խաղողը:

Ամբողջ աշխարհում ընդունված է՝ ինչպես դիմավորես Նոր տարին, այնպես էլ կանցնի ամբողջ տարին:

Տարբեր ազգեր տարբեր ձևով են դիմավորում Ամանորը:

Հին Բաբելոնում տոնը նշվում էր գարնանը: Տոների ժամանակ թագավորը իր շքանշանով հեռանում էր քաղաքից, իսկ քաղաքացիները հնարավորություն էին ստանում ազատորեն զբոսնելու եւ ուրախանալու:



վառել ծղոտե խրտվիլակի հետ միասին:

Անգլիայում XIX դարում գոյություն ունեին բարեգործական կազմակերպություններ, որոնք աղքատներին բաժանում էին ալյուր, շաքար եւ չամիչ՝ ամանորյա պուդինգ պատրաստելու համար:

Հարավային կիսագնդում, սովորաբար, զարդարում են էվկալիպտ, քանի որ այնտեղ Նոր տարին համընկնում է ամառվա թեժ շրջանին:

Հոլանդիայում ամանորյա տոնական ուտեստները փքաբլիթներն են, որոնք խորհրդանշում են ամբողջականություն:

Չյունանուշը հորինվել է անցած դարի 50-ականներին՝ մանկագիրներ Լեւ Կասսիլի եւ Սերգեյ Միխալկովի կողմից, ովքեր մանկական ներկայացումներում ավելացրին նաեւ Չմեռ պապի թռնակի կերպարը:

Պեռ Նոելը (ֆրանսիական Չմեռ պապ) տեղից տեղ է գնում ավանակով եւ երեխաների նվերները թողնում է նրանց կոշիկների մեջ: Երեխաները եւս իրենց հերթին նվեր են պատրաստում, այն է՝ խոտ՝ ավանակի համար:

Հունաստանում ընտանիքի

Հին ժամանակներից սկսած՝ սլավոնները եղեմին զարդարել են «ուտելի խաղալիքներով»:

Շոտլանդիայում Նոր տարվա առաջին օրը ամուսնության առաջարկություն չեն անում, ինչպես նաեւ չեն թափում աղբը:

Չմեռ պապին սկսել են տուն հրավիրել ԽՍՀՄ-ում՝ 1970-ականներին:

Ամանորյա նվերների եւ ամանորյա շնորհավորական բացիկների թվով ռեկորդակիր է համարվում ԱՄՆ-ը:

Ճապոնիայում Նոր տարուն ավանդաբար մատուցում են կաղամբ, խարակած շագանակներ, ընդեղեն եւ ձկնկիթ, որոնք համապատասխանաբար խորհրդանշում են ուրախություն, հաջողություն, առողջություն եւ շատ երեխաներ:

Բուլղարիայում Ամանորին՝ ուղիղ կեսգիշերին, երեք թուփով անջատում են լույսը, յուրաքանչյուրը կարող է համբուրել նրան, ում կցանկանա. ոչ ոք այդ մասին չի իմանա:

Սլավոնական միջերում Չմեռ պապը խորհրդանշում է ծննդային դաժան սառնամանիքը:

Յոլպուկիի հայրենիքը Լապ-



# Ինչ նվիրել Ամանորի առիթով

## Ի՞նչ են նվիրում երկրագնդի տարբեր անկյուններում Նոր տարվա առթիվ:

«Երջանիկ ճապոնացիները, զուսպ անգլիացիները, տաքարյուն ֆինները, սիրառատ ֆրանսիացիները... բոլորն են տոնում Նոր տարին, բոլորն են սպասում Չմեռ պապին, Սանտա Կլաուսին, պահում երազանքներ ու նվերներ տալիս»,- կարդում ենք համացանցում:

Ամանորյա նվերներ տալու սովորույթը գալիս է Հին Հռոմից: Ասում են՝ առաջին նվերները եղել են դափնու տերեւներ, որոնք երջանկություն ու հաջողություն էին կանխատեսում եկող տարում:

«Ցանկանում եմ բարենպաստ ու երջանիկ Նոր տարի»,- գրում էին հռոմեացիներն ամանորյա նվերների վրա, երբեմն գրում էին նաեւ հունարային բանաստեղծություններ:

Ամերիկացիները, օրինակ, սիրում են ճոխ նվերներ տալ: Նրանք նվերների համար միջինը ծախսում են 50-800 դոլլար: Ամերիկացիները միմյանց նվիրում են հայտնի բրենդային հագուստ, զարդեղեն, թանկ աքսեսուարներ, սիգարետ, գինի, օժանելիք, շարձեր: Ընդունված է նվերը տալ կտրոնով, որպեսզի որեւէ խնդրի դեպքում հնարավոր լինի այն վերադարձնել խանութ: Ամերիկացիները սիրում են նաեւ ճանապարհորդել:

Անգլիացիները մտածում են այլ կերպ՝ Սանտա Կլաուսը հիմնականում բերում է փոքր, ոչ թանկ նվերներ: Դրանք կարող են լինել հետաքրքիր հուշանվերներ, բաժակներ, թյեյնիկներ: Անգլիացիներն անընդունելի են համարում ճոխ նվերները: Նրանք երբեք որպես ամանորյա նվեր չեն տա որեւէ թանկարժեք, եզակի հուշանվեր կամ գարդ. սիրում են նվիրել բանալու օղակներ, բուրավետ մոմեր, գեղեցիկ տիկնիկներ կամ թեյ պատրաստելու գդալներ: Դրանք սրտաբացության եւ ուշադրության արտահայտություն են:

Իտալացիները հակված են նրբաճաշակ ոճին. թանկ ձեռնոցներ՝ կնոջը, ժամացույց՝ տղամարդու. սրանք են ավանդական նվերները: Իտալացիների համար նվերը բարձր ու նուրբ ճաշակի դրսևորում է: Մեկ շիշ լավ գինին նրանց կուրախացնի այնքան, որքան, օրինակ, ոճային փողկապը կամ քաշմիրի կտորը: Իտալացիները, սովորույթի համաձայն, սիրում են դեմ նետել հին կամ անպետք կահույքը, ընդ որում՝ հենց պատուհանից:

Գերմանացիները նվիրում են գրքեր, իսկ ֆրանսիացիները նախընտրում են ոչ գործածական, բայց ինքնատիպ նվերները: Հաճախ նրանք ընտրությունը կանգ է առնում հուշանվերների կամ բացիկների վրա: Չնայած օժանելիքի երկրի համբավին՝ Ֆրանսիայում կնոջը կարող է օժանելիք նվիրել միայն նրա ամուսինը:

Ավստրիայում նախասիրություններն այլ են: Գրեթե յուրաքանչյուրն ուրախ կլինի ստանալ Վիեննայի օպերայի թատրոնի տոմս: Քանի որ Ավստրիայում կյանքը թանկ է, ուստի ավելորդ ծախս չեն անում են նվիրում են միայն անհրաժեշտ իրեր: Ընտանիքների մեծ մասը նախընտրում է Նոր տարուն գեղեցիկ հագուստ կամ աքսեսուարներ ստանալ: Ուշադրության մնան նշանները գնահատում են թե՛ տարբեք, թե՛ երիտասարդ ավստրիացիները:

Դանիայում սիրում են նվիրել զանազան մոմեր: Դանիացիները նվերները չեն դնում տոնածառի տակ, այլ պահում են այնտեղ, որտեղից դժվար կլինի գտնել. դրանք գտնելու համար պետք է շատ ջանք գործադրել: Դանիացիները հյուրը զնալիս սիրում են իրենց հետ վերցնել տարբեր չափի ու ձևի մոմեր: Վիճակագրության համաձայն՝ այս ժողովուրդն ամենից շատ է սիրում մոմեր վառել:

Բելգիացիները տոնին մոտենում են պատասխանատվությամբ, ոչ որպես հաճելի ժամանցի: Նվիրողը նվերի իմաստը բացատրում է բանավոր կամ դրան փակցված



բացիկի միջոցով. ընտրությունը երբեք պատահական չի լինում. նվիրում են այն, ինչ իրականում պետք է տվյալ մարդուն:

Հունգարացիները սիրում են միմյանց նվիրել գրքեր, հաստ գուլպաներ, սահնակներ: Երեխաները մեծահասակներին նվիրում են իրենց պատրաստած նվերները:

Հոլանդացի երեխաները Նոր տարուն ստանում են քաղցրավենիքով ու բլիթներով տոպրակներ, որոնք, ավանդույթի համաձայն, նրանց կոշիկների մեջ են դնում «ոգիները»:

Հույները Նոր տարուն միմյանց նվիրում են քար: Նվիրում են նաեւ ստանդարտ նվերներ, օրինակ՝ շամպայնով ու գինով զամբյուղ:

Իռլանդիայում ընդունված է երեխաներին նվիրել փոքրիկ իրեշտակներ եւ Հիսուսի ու Մարիամ Աստվածածնի փայտե արձանիկներ, իսկ մեծահասակները հյուրը զնալիս իրենց հետ տանում են որեւէ համեղ ուտեստ, ամուրիները՝ գինի:

Շոտլանդացիներն Ամանորին հյուրը զնալիս տանում են մի կտոր կարկանդակ, մեկ բաժակ գինի ու մի կտոր ածուխ:

Իսպանիայում տոնի նախօրեին ցանկացած տուն հյուրը զնալիս հարկավոր է նվերի տուփի մեջ ներառել նաեւ շամպայն ու նուզայի կտոր:

Շվեդիայում, ավանդաբար, միմյանց նվիրում են ինքնաշեն մոմեր:

Բուլղարիայում ավանդական նվեր է հոնի ճյուղը: Ըստ լեգենդի՝ այս բույսն ունի հաջողություն բերելու եւ չարիքներից ազատելու հատկություն:

Ոսկեղեն, նոր տեխնիկա, հագուստ. սրանք Ռուսաստանում ընդունված Չմեռ Պապի նվերներն են:

Ճապոնացիները Ամանորին միմյանց նվիրում են «օսեյբո»՝ ավանդական նվերների հավաքածու՝ մի կտոր հոտավետ օճառ, առօրյայում անհրաժեշտ պարագաներ: Ճապոնացիներին հնարավոր է նեղացնել՝ Ամանորին ծաղիկներ նվիրելով: Համարվում է, որ ծաղիկ նվիրելու իրավունք ունեն միայն կայսերական ընտանիքի անդամները:

Չինաստանում նվերը պետք է բաղկացած լինի երկու մասից. չինացիները Նոր տարուն նվիրում են զույգ իրեր՝ երկու մոմ, երկու բաժակ եւ այլն, որոնք խորհրդանշում են միասնությունը եւ ընտանիքի ամրությունը: Ոչ մի դեպքում չի կարելի չինացիներին նվիրել ժամացույց: Համարվում է, որ այն հաշվում է կյանքի մնացած ժամերը եւ մոտեցնում է մահը:

Գրեմլանդիայի եսկիմոսները միմյանց նվիրում են սառույցից պատրաստված սպիտակ արջերի նկարներով կերպարներ:

Ինչպես տեսնում ենք, տարբեր երկրներում նվերները խիստ տարբերվում են իրարից. այն, ինչ մի երկրում ուրախություն կպատճառի, մեկ այլ երկրում կարող է համարվել վատ նշան: Այնպես որ, ուշադիր եղեք:

“Yahoo! News” կայքը, օրինակ, որոշել է օգնել տղամարդկանց ճիշտ նվեր ընտրել կանանց համար եւ ներկայացրել է այն նվերների ցանկը, որոնց չի կարելի նվիրել: Դրանք են.

- խոհանոցային իր կամ տեխնիկա, եթե նա անձանք Ձեզնից չի խնդրել մնան բան,

քանի որ դրանք կնոջը հիշեցնում են իր տաղտուկ առօրյան,

- հագուստ, քանի որ հնարավոր է, որ այն ունենա սխալ չափսեր,

- Ձեր նկարը շրջանակի մեջ, քանի որ դա կընկալվի՝ որպես եսասիրություն,

- որեւէ բան, որ հնարավոր չլինի հետագայում փոխել, քանի որ չի բացառվում, որ այն դուր չգա ձեր սիրելիին,

- քաշի կորստին նպաստող իրեր,

- նվերներ, որոնք առաջին հերթին Ձեզ են հաճելի,

- մարզական միջոցառումների տոմսեր. դա կանանց նյարդայնացնում է,

- էժանագին հուշանվերներ,

- օժանելիք, եթե նախօրեք չեք խորհրդակցել նրա հետ եւ ծանոթ չեք նրա նախընտրած բույրերին,

- կանխիկ դրամ. դա ընդհանրապես ոչ մասնորոնչ է եւ կարող է վիրավորել կանանց,

- դիմախորհրդանալ պարագաներ,

- ալկոհոլային խմիչքներ,

- ծաղիկներ, իհարկե, ամենացանկալի նվերների շարքում են, սակայն ամանորյա տոններին հարկավոր է ավելի իմաստալից նվեր ընտրել,

- նույն նվերը. շատ ուշադիր եղեք, քանի որ կանայք միշտ հիշում են, թե իրենց ինչ են նվիրել նախորդ անգամ,

- քաղցրավենիք. սա ես կանանց սիրելի նվերների ցանկում է, սակայն կարիք չկա ամեն առիթով այն նվիրել: Ավելի նախընտրելի է համարել որեւէ նվերի հետ:

## Իսկ ի՞նչ նվիրել փոքրիկներին Նոր տարվա կապակցությամբ:

Նոր տարին շատ սպասված ու սիրելի տոն է հատկապես փոքրիկների համար: Պատահական չէ, որ երեխաները շատ շուտ են սկսում նախապատրաստվել Ամանորին, բանաստեղծություններ ու ամանորյա երգեր են սովորում՝ Չմեռ պապին հաճոյանալու, ինչպես նաեւ նրան զարմացնելու համար: Փոքրիկները, որպես կանոն, ակնկալում են, որ հրաշագործ ու բարի Չմեռ պապիկն ու գեղեցկուհի Չյունամուշիկը Ամանորի կախարհական գիշերը կիրականացնեն իրենց երազանքները... առավոտյան տոնածառի տակ նրանք կգտնեն իրենց այդքան երազած նվերները:

Ծնողների համար բարդ գործ է որոշելը՝ ինչ նվիրել փոքրիկին Ամանորի կապակցությամբ: Իհարկե, գեղեցիկ տիկնիկը կամ «հզոր» ավտոմեքենան կուրախացնեն փոքրիկին, բայց միայն այդքանը: Ցանկալի է, որ ամանորյա նվերը ոչ միայն սիրելի լինի փոքրիկի համար, այլև զարմացնի նրան, լինի բացառիկ, ինչպիսին մինչ այդ նա չէր ստացել: Իսկ տիկնիկ ու ավտոմեքենա փոքրիկները շատ հաճախ են նվեր ստանում: Այնպիսի բան նվիրեք փոքրիկին, որ հնարավորություն տա նրան զարգացնելու իր ստեղծագործական ունակությունները: Փոքրիկների մի մասը նկարելու հակում ունի, մի մասը՝ երգելու եւ այլն:

## Ինչպե՞ս ընտրել նվեր փոքրիկի համար:

- Փոքրիկի համար Ամանորի նվեր ընտրելիս պետք է ուղղորդվել երեխայի ցանկությամբ: Հաճախ ծնողի ընտրության հիմ-

## Ի՞նչ չի կարելի նվիրել Նոր տարուն:

Տոնածառի խաղալիքներ, դիմակահանդեսի հագուստներ, փայլեր, հուշանվերներ. ասա Նոր տարվա նվերների հիմնական հավաքածուն: Բայց դրանք ընտրելիս հարկավոր է զգույշ լինել: Խանութներն ու տոնավաճառները լեփ-լեցուն են ամանորյա, հիմնականում՝ չինական զարդարանքներով: Դրանցից շատերը էժան եւ վտանգավոր են: Ինչպե՞ս ճիշտ ընտրություն կատարել, եթե ամեն հինգերորդ խաղալիքը կամ ամանորյա կոստյումը կարող է վնասել ձեր առողջությանը: Պլաստիկ խաղալիքների հավաքածուները կարող են զարդարված լինել կտորե ժապավեններով, որոնք ամրացվում են թունավոր սոսնձով, իսկ պոկված ուլունքը հեշտությամբ կարող է հայտնվել երեխայի թքի կամ ականջի մեջ: Եթե տոնածառի խաղալիքի վրայի ներկը թափվում է, այն զննել պետք է՝ խորհուրդ են տալիս մասնագետները, քանի որ անորակ ներկը կարող է անգամ սնդիկ արտադրել: Էկոլոգիապես անհամապատասխան խաղալիքներն են: Բայց հավաքածուն զննելիս ամեն դեպքում հարկավոր է ճշտել արտադրողին: Ամորակ արտադրության լույսերը կարող են այրվել վայրկյանների ընթացքում: Դրանք կարող են նաեւ բռնկվել՝ տոնածառի հետ միասին:

քում ընկած է լինում այն հանգամանքը, թե ինքն ինչ նվեր է ցանկացել ստանալ իր մանկության տարիներին: Նման դեպքերում այդ նվերը փոքրիկին այնքան ուրախություն չի պատճառի, ինչքան ծնողներին:

- Երեխայի համար ցանկալի է նվեր ընտրել եւ զննել նախօրեք: Ամանորի նախօրեին խաղալիքները խանութներից ասես «ցնդում են»: Այդ իսկ պատճառով պետք չէ նվերի ձեռք բերումը թողնել վերջին րոպեին, որպեսզի ընտրության հնարավորությունը մեծ լինի:

- Ձեր փոքրիկին մի քանի փոքր նվերն ավելի մեծ ուրախություն կպատճառի, քան մեկ շատ մեծ ու թանկարժեք նվերը:

- Նվերը գնեք՝ առանց երեխայի: Երբեք նրան մի՛ հարցրեք, թե ինչ նվեր կուզենա ստանալ Նոր տարուն: Այլապես՝ կկորի Ամանորի տոնին հրաշքի սպասումը:

Ամանորի ավանդական նվերներ կարելի է համարել քաղցրավենիքն ու խաղալիքը:

Մանկական կայքերում կարելի է հանդիպել Ամանորի նվերների ասա այսպիսի շարքի՝ զարգացնող խաղալիքներ ու գրքեր, տոնական զգեստներ, ստեղծագործական հավաքածուներ, սեղանի խաղեր, կոնստրուկտորներ եւ լեզո, գնացք՝ իր երկաթուղով, խոտը գրքեր կամ մանկական սկավառակներ, նկարչական գրատախտակներ եւ այլն:



## Ինչպե՞ս հանձնել երեխային նվերը:

Դա կախված է երեխայի տարիքից: Նվերը կարելի է հանձնել դերասանների՝ Չմեռ պապիկի եւ Չյունամուշիկի միջոցով: Եթե երեխան մի քիչ մեծ է, ապա կարելի է հետաքրքիր արկածի վերածել այդ գործընթացը: Կարելի է քարտեզ կազմել, որպեսզի երեխան ինքը գտնի, թե որտեղ է թաքնված նվերը: Եթե բնակվում եք առաջին հարկում, ապա կարելի է կազմակերպել այնպես, որ փոքրիկը տեսնի, թե ինչպես է Չմեռ պապիկը նվերը նետում օդանցքից ներս: Եթե թվարկվածների մեջ ոչ մի հարմար տարբերակ չկա, ապա ավանդական տոնածառի տակ դրված նվերները եւս շատ կուրախացնեն փոքրիկին:

Ցանկացած տարիքում երեխաները հավատում են հրաշքին՝ չնայած այն բանին, որ նրանցից ոմանք կարող են արդեն գլխի ընկած լինել, որ հենց իրենց ծնողներն են տոնածառի տակ նվեր դնում: Այնուհանդերձ, նրանց համար Չմեռ պապն ու Չյունամուշիկը միշտ կմնան բարի հրաշագործներ, իսկ երազանքի իրականացման հրաշքը տոնը հեքիաթ կդարձնի:



Ի գիտություն 12-րդ դասարանի շրջանավարտների եւ դիմորդների

Դուռի շնորհավորանքի

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը 2023 թվականի դեկտեմբերի 15-ից սկսել է 2023-2024 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական եւ 2024 թվականի բուհերի ընդունելության համար սահմանված միասնական քննությունների (1-ին փուլ, հունվար, փետրվար) հայտագրման գործընթացը:

Պետական ավարտական քննություններին մասնակցելու համար շրջանավարտը մինչեւ դեկտեմբերի 10-ը գրավոր պետք է դիմեր իր ուսումնական հաստատության տնօրենին: Ուսումնական հաստատության տնօրենը պետական ավարտական քննություններ հանձնողների ցուցակ հայտերը մուտքագրում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի app.dimord.am էլեկտրոնային կայքում դեկտեմբերի 15-ից 30-ը:

Միասնական քննությանը մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) առցանց եղանակով Գնահատման եւ թեստավորման կենտրոնի dimord.am կայքէջում պետք է լրացնի ընդունելության դիմում-հայտ:

Շրջանավարտը (դիմորդը) առարկայական դիմում-հայտում լրացնում է առավելագույնը երկու միասնական քննություն: Դիմում-հայտը լրացնելու համար շրջանավարտը դիմում է իր ուսումնական հաստատության տնօրենին, իսկ նախորդ տարիների եւ 2023-2024 ուստարվա նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները, օտարերկրացիները, օտարերկրյա ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված ուսումնական հաստատության տնօրենին:

Ընդունելության դիմում-հայտը լրացնելու համար անհրաժեշտ է նաեւ՝

- 3x4 չափի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը,
- անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,
- 77 ֆինանսների նախարարությունում Գնահատման եւ թեստավորման կենտրոնի 900018003401 հաշվեհամարին յուրաքանչյուր քննության համար փոխանցված 4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ վճարի անդորրագիրը:

Միասնական քննությունների վճարից ազատվում են՝

- պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք,
- 1-ին եւ 2-րդ խմբերի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- 77 պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքուկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, 77 պաշտպանության նախարարության, 77 կառավարությանն առընթեր ոստիկանության եւ 77 կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Բուհերի ընդունելության առաջին փուլի քննությունների դիմում-հայտերն ընդունվում են **դեկտեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 25-ը՝ ժամը 18:00-ն:**

Գնահատման եւ թեստավորման կենտրոն

**Կորել է**

**Շուշան Մկրտչի Դոյոյանի՝** բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հավաստող՝ Ա ՈՒՅԵՎ վկայագիրը՝ տրված է Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից, 29.10.2001 թ.:

Համարել անվավեր:

**Կորել է**

**Հերիքնազ Գարեգինի Դավթյանի՝** Երեւանի հ. 42 միջնակարգ պրոֆտեխնիկական ուսումնարանի (այժմ՝ Երեւանի հ.4 արհեստագործական պետական ուսումնարան ՊՈԱԿ) կողմից 10.07.1975 թ. տրված N302769 ավարտական վկայականը (դիպլոմը):

Համարել անվավեր:

Մեր կրթական հասակագրում կան կիրքեր, որոնց մակերեսային գործունեությունը խաբարիվ է առաջին հերթին աշակերտի նկատմամբ ծնողական զեղր հոգաբարձության, խոր եւ կուրբ հոգեբանական ունակությունների, սովորողի միջին եւ հոգու ներքաշնակ ճարտարասպետության վրա:

Դուռ, սիրելի՛ պիկնի Գաբրիելյան, այդ կիրքերից է: Զեղր մակերեսային 41-ամյա գործունեությունը ստիպածի ակտիվների վրայությունն է:

Ավելի քան 20 տարի Դուռ անընդունակ կիրքի անընդունակ Երեւանի հ. 195 ավագ դպրոցում կարգապահ եւ ուսուցչական գծով փոխդաստիարակչի պաշտոնում կարեւորագույն աշխատանք եւ, առաջին չափապահության, դարձել էք դպրոցի կենսագործունեության անհրաժեշտ հենասյուներից մեկը: Բայց ուս Զեղր գործի միայն պաշտոնական մասն է: Զեղր կերպարն ու անկեղծ շիտունները սովորողների հեղր դասարանական են միայն մարդկային բարքը արժեքներ:

Միտելի՛ պիկնի Գաբրիելյան, Դպրոցի փոփոխությունը, ուսուցչական անկեղծ կարիերա եւ աշակերտական խորհուրդը պարզապես շնորհավորում են Զեղր՝ ձեռքի փայլուն կարգապահության, մարտնչության Զեղր խազառոյզություն, անուպառ եռանդ աշխատանքում եւ երգանքություն անկեղծ կրակում: Թո՛ղ Զեղր գաղիք աշխատանքային փայլունները միշտ հազեցան շիտուն ծաղկապարտ եւ արեւաշող գաբուններով:

Երեւանի հ. 195 ավագ դպրոցի տնօրինություն, ուսուցչական անձնակազմ, աշակերտական խորհուրդ



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 77 ԿԳՄՍ «Մարտունու պետական բժշկական թոլեք» ՊՈԱԿ-ի գինղեկի պաշտոնի թափուր տեղի համար: Զինղեկի պաշտոնի համար նախատեսված վարձատվությունը որոշվում է ըստ դրույթի:

Մրցույթի մասնակցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է գրավոր եւ բանավոր ըստ 77 ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

- 1) Դիմում (ձեւ 1),
- 2) 1 լուսանկար՝ 3x4 չափի,
- 3) Փաստաթուղթ (դիպլոմ) <<Հանրակրթության մասին>> 77 օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- 4) Անձը հավաստող փաստաթուղթ,
- 5) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքուկի պատճենը՝ առկայության դեպքում,
- 6) Ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- 7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքուկ,
- 9) Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները, (դրանց առկայության դեպքում),
- 10) Մրցույթին մասնակցող պարտադիր պիտի ունենա պահեստգրի սպայի կոչում եւ տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. դեկտեմբերի 21-ից մինչեւ 2024 թ. հունվարի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչը 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Մարտունու պետական բժշկական թոլեքում, հասցեն՝ ք.Մարտունու, Նաբեկացի 2/1:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. հունվարի 10-ին՝ ժամը 14:30-ին**, Մարտունու պետական բժշկական թոլեքում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0262) 4-13-30 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 77 ԿԳՄՍ «Մարտունու պետական բժշկական թոլեք» ՊՈԱԿ-ի կենսաբանության (244 ժամ), մաթեմատիկայի (200 ժամ) առարկաների (մոդուլների) դասախոսների թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

**Թափուր տեղի մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝**

- 1) «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,
- 2) տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

- 1) Դիմում (ձեւ 1),
- 2) Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակ եւ պատճեն),
- 3) Անձնագիր (բնօրինակ եւ պատճեն),
- 4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- 5) Ինքնակենսագրություն (Ձեւ 4),
- 6) 1 լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) Այլ պետությունների քաղաքացիները՝ 77-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ 77 համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- 8) 77 արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքուկ (բնօրինակ եւ պատճեն),
- 9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. դեկտեմբերի 21-ից մինչեւ 2024 թ. հունվարի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչը 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Մարտունու պետական բժշկական թոլեքում, հասցեն՝ ք.Մարտունու, Նաբեկացի 2/1:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. հունվարի 10-ին՝ ժամը 14:30-ին**, Մարտունու պետական բժշկական թոլեքում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0262) 4-13-30, (094) 51-82-55 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 77 ԿԳՄՍ «Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Բիմիա» (204 դասաժամ), «Ֆիզիկա» (186 դասաժամ), «Անգլերեն» (408 դասաժամ), «Ինֆորմատիկա» եւ «Հանրակրթության հիմունքներ» (360 դասաժամ) առարկաների ուսուցիչների եւ «Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմախորհրդանշան» մասնագիտության (1 դրույթ) արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր հարցազրույցի միջոցով ըստ ուսումնարանի կողմից կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) եւ մանկավարժական գործունեությանը:

**Մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝**

- 1) «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,
- 2) տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

- 1) Դիմում
- 2) Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) բնօրինակ
- 3) Անձնագիր (բնօրինակ եւ պատճեն)
- 4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
- 5) Ինքնակենսագրություն (Ձեւ 4)
- 6) Սեկ լուսանկար 364 չափի
- 7) Այլ պետությունների քաղաքացիները 77 - ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
- 8) 77 արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքուկ (բնօրինակ եւ պատճեն):
- 9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան կոչումը հաստատող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. դեկտեմբերի 21-ից մինչը 2024 թ. հունվարի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը՝ բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն՝ ք. Եղվարդ, Երեւանյան 10:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. հունվարի 10-ին**, արտադրական ուսուցման վարպետի համար **ժամը 11:00-ին**, իսկ ուսուցիչների համար **ժամը 13:00-ին**, Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարանում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 26-91-26, (077) 56-39-52 հեռախոսահամարով:





## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի ոսկերիչ վարպետի թափուր տեղի համար:

### Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1. դիմում (լրացվում է տեղում),
2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),
3. Անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Չեւ 4),
6. Մեկ լուսանկար 364 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիներին:

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2023 թ. դեկտեմբերի 29-ը ներառյալ՝ ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից՝ ժամը 10:00-ից 15:00-ը**, Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջում, հասցեն ք. Երեւան, Բագրատունյաց 71:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. հունվարի 5-ին, ժամը 12:00-ին**, Երեւանի պետական տեխնոլոգիական քոլեջում:  
Տեղեկությունների համար զանգահարել (010) 48-06-41, (094) 72-74-83 հեռախոսահամարներով:  
էլեկտրոնային հասցեն՝ eptq11@mail.ru:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւանի Ե. Աճեմյանի անվան հ. 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Հաշվապահական հաշվառում» («Ֆինանսական մաթեմատիկա» (162 ժամ), «Տնտեսագիտության հիմունքներ» (126 ժամ), «Տնտեսագիտության տեսություն» (124 ժամ)), «Մեմբերներ» [«Լյուք. Ֆինանսական հոսք» (72 ժամ)], «Ապասարկման կազմակերպումը հյուրանոցներում եւ զբոսաշրջային համալիրներում» [«Աշխատակազմի կառավարում» (108 ժամ)], «Շուկայաբանություն» [«Մարքեթինգային կազմակերպման հիմունքներ եւ իրավական դրազավորում» (68 ժամ)] առարկաների մոդուլներ դասավանդող դասախոսների, «Խոհարարական գործ», «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, մորոգում եւ սպասարկում» մասնագիտությունների վարպետների թափուր տեղերի համար:

### Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (լրացվում է տեղում),
- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),
- անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չեւ 4),
- մեկ լուսանկար 3\*4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2024 թ. հունվարի 4-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 15:00-ը, ամեն օր՝ բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Երեւանի Ե. Աճեմյանի անվան հ. 2 պետական քոլեջում, հասցեն ք. Երեւան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Մուղղվական 37U:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. հունվարի 9-ին՝ ժամը 10:00-ին**՝ «Հաշվապահական հաշվառում», **ժամը 11:00-ին**՝ «Խոհարարական գործ», **ժամը 11:30-ին**՝ «Վերականգնող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, մորոգում եւ սպասարկում», **ժամը 12:00-ին**՝ «Մեմբերներ», **ժամը 12:30-ին**՝ «Շուկայաբանություն», **ժամը 13:00-ին**՝ «Ապասարկման կազմակերպումը հյուրանոցներում եւ զբոսաշրջային համալիրներում» դասախոսների եւ վարպետների համար, Երեւանի Ե. Աճեմյանի անվան հ. 2 պետական քոլեջում:  
Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 67-23-01, (010) 67-24-43 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Տրանսպորտային միջոցների շահագործում եւ մորոգում» եւ «Խոհարարական գործ» մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների եւ հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլների) դասավանդողների թափուր տեղերի համար:

### Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1. դիմում (Չեւ 1),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),
3. Անձնագիրը (բնօրինակը եւ պատճեն),
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Չեւ 4),
6. Մեկ լուսանկար 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիներին,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են **մինչև 2024 թ. հունվարի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:30-ից մինչև 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն ք. Երեւան, Բուժնազյան 143:

Մրցույթը կկայանա **2024 թ. հունվարի 10-ին՝ ժամը 12:00-ին**, Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարանում:  
Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-17-31, (010) 47-17-32, (091) 11-34-98 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում» (252 ժամ), «Հաշվողական տեխնոլոգիայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» եւ «Համակարգչային գեղարվեստական նախագծում» (306 ժամ) մասնագիտական մոդուլների դասախոսի թափուր տեղերի համար:

Նշված թափուր տեղերի համապատասխանության նկատմամբ թեկնածուն պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխան միջոցային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն:

### Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1. դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),
3. անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն,
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2023 թ. դեկտեմբերի 26-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում, հասցեն ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աբարբեկյան 156:

Մրցույթը կկայանա **2023 թ. դեկտեմբերի 29-ին՝ ժամը 15:30-ին**, Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում:  
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0235) 2-40-81, (093) 01-37-80 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Չարեցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Մարքեթինգային հմտություններ», «Կառավարման (մեմբերների) ընդհանուր կարողություններ», «Աշխատակազմի կառավարում» եւ «Միջոցառումների (MICE) կազմակերպում եւ սպասարկում հյուրանոցներում եւ զբոսաշրջային համալիրներում» մոդուլների դասախոսի թափուր տեղի համար (ընդամենը 484 ժամ):

Մրցույթը անցկացվում է ըստ Չարեցավանի պետական քոլեջի մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգի:

### Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (լրացվում է տեղում),
  - կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),
  - անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),
  - աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
  - ինքնակենսագրություն (Չեւ 4),
  - մեկ լուսանկար՝ 3\*4 չափի,
  - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
  - ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),
  - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
- Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. դեկտեմբերի 20-ից մինչև 2024 թ. հունվարի 4-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 15:00-ը՝ բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից**, Չարեցավանի պետական քոլեջում, հասցեն ք. Չարեցավան, Խորենյան 1:
- Մրցույթը տեղի կունենա **2024 թ. հունվարի 9-ին՝ ժամը 14:00-ին**, Չարեցավանի պետական քոլեջում:  
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0226) 4-32-82, (077) 61-45-20 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Ոսկերչություն», «Վարպետական արվեստ եւ զարդանյութի դիմադրողական», «Մետաղների մեխանիկական մշակումը հաստոցների եւ գծերի վրա», «Խոհարարական գործ» մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների եւ «Հասարակագիտություն», «Հայոց պատմություն», առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում առանձին:

### Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավարձի եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում է: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն անբողջական չէ, կամ ձևակերպված թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2023 թ. դեկտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից**, Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն ք. Էջմիածնի, Մ. Մելքոնյան 53:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. հունվարի 4-ին՝ ժամը 15:00-ին**, Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարանում:  
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0231) 5-59-65 հեռախոսահամարով:

## Հայտարարություն

«Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

**Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝**

- 1) ՀՀ քաղաքացիությունը.
  - 2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
- Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝**
- 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի ամունով.
  - 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
  - 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
  - 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.
  - 5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2024 թվականի հունվարի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից**, Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում, հասցեն ք. Գյումրի, Բուլբուրային 10U:

Մրցույթը տեղի կունենա **2024 թվականի հունվարի 22-ին՝ ժամը 12:00-ին**, Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում:  
Տեղեկությունների համար զանգահարել՝ (055) 30-15-56, (094) 30-05-56 հեռախոսահամարներով:

էլեկտրոնային հասցեն՝ golimpiakan@yandex.ru:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Դիֆերենցիալ եւ ինտեգրալ հաշվի կիրառություններ» (144 ժամ), «Հավանականությունների տեսություն եւ մաթեմատիկական վիճակագրություն» (96 ժամ), «Հայոց լեզվի եւ խոսքի մշակույթի հիմունքներ» (74 ժամ), «Օպերատորական հիմունքներ» (76 ժամ), «ՀՀ բանկային օրենսդրություն» (72 ժամ), «Բանկային մարքեթինգ» (108 ժամ), «Հաշվապահական հաշվառումը բանկերում» (72 ժամ), «Ավանդային եւ վարկային գործառնություններ» (144 ժամ), «Բանկային համակարգչային ծրագրեր. «ՀԾ բանկ» համակարգ» (144 ժամ), «Անձնական խնամքի, հիգիենայի եւ բուժական ծառայությունների սպասարկման կազմակերպում» (180 ժամ), «Միջոցառումների սպասարկման կազմակերպում» (72 ժամ), «Սոցիալ-կենցաղային ծառայությունների սպասարկման կազմակերպում» (72 ժամ), «Արդյունաբերական համակարգերի սպասարկման կազմակերպում» (72 ժամ), «Մեծածախ առևտուր» (72 ժամ), «Սերչանդայզինգ» (36 ժամ), «Միջազգային առևտրային գործառնություններ» (72 ժամ), «Առևտրային համակարգչային ծրագրեր. «ՀԾ-առևտուր» համակարգ» (54 ժամ), «Ստանդարտացում» (ոչ մրցութային, 72 ժամ), «Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն» (ոչ մրցութային, 90 ժամ), «Վաճառքի հաղորդակցություն» (ոչ մրցութային, 54 ժամ), «Լոգիստիկ կապուլներ» (ոչ մրցութային, 24 ժամ), «Բույսերի աճի եւ զարգացման համար անհրաժեշտ գործոններ» (54 ժամ), «Մոլախոտերը եւ պայքարը դրանց դեմ» (38 ժամ), «Բանջարաբուստանային մշակաբույսերի մշակության եւ բերքահավաքի տեխնոլոգիա» (60 ժամ), «Ցանցաշրջանառության համակարգերը եւ դրանց առանձնահատկությունները» (48 ժամ), «Աշխարհային արտադրություն տեխնոլոգիաները պաշտպանված գրունտի պայմաններում» (60 ժամ), «Լանդշերի վրա բազմամյա տնկարկների հիմնման տեխնոլոգիաները» (72 ժամ), «Լուսանկարչություն» (110 ժամ), «Ֆեռուտատ եւ կիրտեխնիկա» (72 ժամ), «Համակարգչային մոնտաժ» (72 ժամ) առարկաների (մոդուլների) դասախոսի թափուր տեղերի համար:

**Անկալվարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջները.**

- Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ:

### Պահանջվող փաստաթղթերի ցանկը՝

1. դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճեն),
3. անձնագիր (բնօրինակը եւ պատճեն),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն,
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիներին,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճեն),
9. Հ











































# Կարդա՛ եւ կ ս ի ր ե ս

Ահա եւ, սիրելի՛ ընթերցող, Քո դատին հանձնեցինք «Կրթություն» շաբաթաթերթի 2023 թվականի վերջին համարը: Ների՛ր, եթե ինչ-ինչ հարցերի պատասխանները փնտրեցիր ու չգտար մեր թերթի էջերում: Հուսով ենք, որ մեր երկխոսությունը լայնորեն կծավալվի նաեւ 2024 թվականին եւ կլինի համահունչ Քո ընթերցողական ճաշակին եւ Քեզ հետաքրքրող հարցադրումներին:

Նոր տարում «Կրթությունը» լույս կտեսնի նորացած տեսքով եւ, բնականաբար, կլինի ավելի բազմազան:

Գիտե՛ս, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել եւ ուսուցչի, մանկավարժի, եւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կլուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոսակցողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթե՛ր չես, հրատապ լրատվություն չես՝ հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խո՛րթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզի չն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքե՛ն, դրական նր դրվատող ու հասարակություն կրթող... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով գայթակղող:

Սիրելի՛ ընթերցող, ո՛վ էլ որ լինես, ի՛նչ մասնագիտություն կամ նախասիրություններ էլ որ ունենաս, համոզված եղիր, «Կրթությունը» անարատ հոգեւոր սնունդ է տալու Քեզ, եւ ո՛չ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ այն օրավուր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դու՛ ես: Քո՛ բաժանորդագրությամբ, կրպակներից Քո՛ գնումներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու՛ հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատևի, դառնա փնտրված ու սիրված թերթ: Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր «Կրթություն», դրանով Քո՛ նպաստը բեր երկրի կրթական համակարգի լուսաբանման, բարեփոխումների հրապարակային ու թափանցիկ մեկնաբանման, ի վերջո՝ մեր զավակների ուսման, հայեցի դաստիարակության, ազգային դպրոցի ձեւավորման ու զարգացման ամենից կարեւոր գործին, առանց որի չի կայանա մեր երազած **Հայրենիքը**, եւ մեր **Տունը** կիսատ կմնա...

### Կարդա՛ եւ կ ս ի ր ե ս:

Եվ վերջում, թե՛ս մի քիչ շուտ, բայց անկեղծ սրտով ասում ենք՝

**Բարի Ամանոր եւ Սուրբ Ծննդյան տոն: Թող Նոր տարին իրոք լինի բարեբեր:**



## Աջակցի՛ր

Սիրելի՛ բարեկամ, Մինչեւ տարեվերջ մենք այլեւս չենք հանդիպի... Ուրեմն՝ նախապես բարին մաղթենք միմյանց ու մեր երկրին եւ հուսանք, որ **Նոր տարին** արմատապես կփոխի մեզանում տիրող իրավիճակը եւ «վերջ կտա հայի ցավերին» (Ռ. Պատկանյան): Թող **Վիշապի** տարին բարեբեր լինի բոլորիս համար: Այն կգա ճիշտ ժամանակին, կսկսվի նոր՝ **2024** թվականը, եւ մենք դարձյալ կհանդիպենք միմյանց, ինչպես արդեն ավանդաբար՝ ճիշտ **52** անգամ... Եւ այդպես կլինի, մաղթենք, դեռ երկար ժամանակ:



... **Սուրբ Ծննդյան** օրերին կհաջորդի *ձմեռային արծակուրդը*: Հետո կավարտվի *ուսումնական տարին*: Ինչպես միշտ, *ամառը* կլինի քննություններով լի, *միասնական, կենտրոնացված, հատուկ ստեղծագործական...* Նոր *ուսումնական տարին* դարձյալ կունենա նորություններ. կրթական ոլորտում բարեփոխումները նոր բովանդակություն կառաջարկեն մեզ: *Նոր ծրագրեր, նոր ուսումնական պլաններ, նոր դասագրքեր, թեստեր, ուղեցույցներ, կանոններ, կանոնակարգեր...* Պաշտոնական տեղեկատվությունը կհամեմվի մեր ու Քո *դիտարկումներով, առաջարկություններով, կփոխանակենք կարծիք ու տեսակետ...* Դե՛, իսկ Քո եւ Քո կրթօջախի մասին՝ ինչպես ինքդ կամենաս... Մենք լի ենք պատրաստակամությամբ՝ ծառայելու Քեզ, մատուցելու «Համակարգ» ու «Անցուդարձ», «Խոսք եւ լույս», «Նկարագիր» ու «Փորձ», «Հոգեկերտվածք» ու «Դիմանկար», «Գիտելիք» ու «Լուսանցք»... Մեր միջեւ կնքված *զրել-կարդալու* պայմանագիրը կթողնենք ուժի մեջ, ու մենք մեր պարտականությունները կկատարենք *պարբերաբար*, առանց ուշացման, պատշաճ *բովանդակությամբ ու ձեւով*: Իսկ Դու՛, որ մեր լավագույն *բարեկամն* ես, կծանդակես մեզ, ինչպես անցնող տարվա ընթացքում, Քո ամենաթանկ ժամանակի մի փոքր մասը դարձյալ կնվիրես մեզ՝ որպես մեր *ընթերցողը*, մեր *հեղինակը*, մեր *քննադատը*, մեր *աջակիցը*... Եվ որովհետեւ Դու՛ իրոք մեր *աջակիցն* ես, ամանորյա զնունդների արանքում ժամանակ կգտնես՝ մի պահ մտնելու *փոստատուն* եւ *կբաժանորդագրվես «Կրթություն»...* Ի նպաստ մեզ, ի նպաստ *կրթության*, ասել է թե՛ *սերնդի ու երկրի*:



**«Կրթություն» շաբաթաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի նոր՝ 2024 թվականի հունվարի 17-ին**

ՀԻՄՆԱԳԻՐ՝  
ՀՀ ԿԳՆ  
««Կրթություն» թերթի խմբագրություն» ՊԲԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ս-049349, Տրված է՝ 11.01.2001թ. Դասիչ՝ 69312, Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ Մեծի 67, E-mail: krtutun@yandex.ru Հեռ. 57 49 56

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում: Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ Մեծ» հրատարակչության տպարանում: Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 6 տպագրական մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 19.12.2023թ. Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝  
Գլխավոր խմբագիր՝  
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ